ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ

2809 «ԿԱՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
«ԴԵՐՁԱԿ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ ԵՎ ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ԵՐԵՎԱՆ 2009

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ՏՆՕՐԵՆ

_____
(ազգանուն, անուն)

«____»_____200_թ.

_____
Ուսումնական հաստատության անվանումը

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

«Դերձակ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՄԲ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ
որակավորման անվանումը

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ՝ Կարի արտադրության տեխնոլոգիա
մասնագիտության

_____
անվանումը

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ՝ **նախնական մասնագիտական /արհեստագործական/**

ՄԱՍՆԱԳԵՏԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄԸ՝ Դերձակ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԸ՝ **միջնակարգ /լրիվ/ ընդհանուր**

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 1 տարի

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ՝ առկա

I. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Կուրսը	սեպտեմբեր					հոկտեմ				նոյեմբեր				դեկտեմբեր					հունվ.				փետրվ				մարտ					ապրիլ				մայիս					հունիս					հուլիս					օգոստոս				II. Ժամանակի բյուջեն /շաբաթներով/						
	1	8	15	22	27.09 5.10	6	13	20	27.10 2.11	3	10	17	24	1	8	15	22	29.12 4.01	5	12	19	26.01 1.02	2	9	16	23.02 1.03	2	9	16	23	30.03 5.04	6	13	20	27.04 3.05	4	11	18	25	1	8	15	22	29.06 5.07	6	13	20	27.07 2.08	3	10	17	24	Տեսական ուսուցում	Մոդուլների ամփոփում	Պրակտիկա	Ամփոփիչ պետական ատեստավոր. նախապատ.	Ամփոփիչ պետական ատեստավորում	Արձակուրդ	ընդ ամե նը
1																																																																		
2												16					: :	=	=							15									0	0	0	◇	◇	◇	: :	X	X	X	⮝	III	=	=	=	=	=	=	31	2	9	1	1	8	52
3																																																																	
4																																																																	
Ընդամենը																																																																	

	0	◇	X	: :	⮝	III	=
Տեսական ուսուցում	Ուսումնա-կան պրակտիկա տեսական ուսուցմամբ	Ուսումնական պրակտիկա առանց տեսական ուսուցման	Նախաավարտական, արտադրական պրակտիկա	Մոդուլների ամփոփում	Նախապատրաստում ամփոփիչ պետական ատեստավորման	Ամփոփիչ պետական ատեստավո-րում	Արձակուրդ

III. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՊԼԱՆԸ

N	Առարկաների անվանումը և մոդուլները	Ատեստավորում ըստ կիսամյակների			Ուսանողի ուսումնական բեռնվածությունը (ժամ)				Բաշխումն ըստ կուրսերի և կիսամյակների					
					Պարտադիր լսարանային բեռնվածություն				2- րդ կուրս		3-րդ կուրս		4-րդ կուրս	
						Այդ թվում								
		Քննութ.	Ստու-գարք	Կուրս. աշխ.	Ընդա-մենը	Տեսակ. ուսուցում	Լաբոր. և գործն. աշխ	Սեմինար պարապ-մունք	3-րդ կիս. 16 շաբ	4-րդ կիս. 15 շաբ.	5-րդ կիս. շաբ.	6-րդ կիս. շաբ.	7-րդ կիս. 16 շաբ.	8-րդ կիս 15 շաբ.
1.	**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ**													
1.1	Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ	7			72	66	6						36	36
1.2	Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ		7		18	14	4						18	
1.3	Իրավունքի հիմունքներ		8տ.		36	32	4							36
1.4	Պատմություն	8			36	32	4						36	
1.5	Օտար լեզու		7,8տ.		60	20	40						30	30
1.6	Ֆիզիկական կուլտուրա		7, 8.		62	6	56						32	30
	ԸՆԴԱՄԵՆԸ				284	170	114						152	132
2.	**ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ**													
2.1	Էկոլոգիայի հիմունքներ		7տ.		36	26	10						36	
2.2	Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր		7տ.		18	14	4						18	
	ԸՆԴԱՄԵՆԸ				54	40	14						54	
3.	**ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ (մոդուլներ)**													
3.1	Ընդհանուր աշխատանքային գործունեության հմտություններ		7տ		54	24	30						54	
3.2	Հաղորդակցություն		7տ		36	10	26						36	
3.3	Անվտանգություն և առաջին օգնություն		7տ		36	20	16						36	
3.4	Համակարգչային օպերատորության հիմունքներ		7,8տ		54	12	42						27	27
	ԸՆԴԱՄԵՆԸ				180	62	118						135	45
4.	**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (մոդուլներ)**													
4.1	Մասնագիտության հիմունքներ		7տ		72	18	54						72	
4.2	Ձեռքի և մեքենայի կարատեսակներ		7տ		36	4	32						36	
	ԸՆԴԱՄԵՆԸ				108	22	8						108	
5.	**ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (մոդուլներ)**													
5.1	Գրպանների մշակում		7տ		36	8	28						36	
5.2	Մանր մասնիկների մշակում		7տ		36	10	26						36	
5.3	Աստառի մշակում		8տ		18	3	15							18
5.4	Կանացի անդրավարտիքի մշակում		8տ		40	8	32							40
5.5	Կանացի վերնաշապիկի մշակում		8տ		18	4	14							18
5.6	Ուղիղ ուրվագիծով կիսաշրջազգեստի մշակում		8տ		22	4	18							22
5.7	Խալաթի (շրջազգեստի) մշակում		8տ		36	7	29							36
5.8	Վերարկուի և կոստյումի մշակում		8տ		144	30	114							144
5.9	Կանացի գլխարկի (8 կտորանի կեպկա) մշակում		8տ		22	4	18							22
5.10	Հաճախորդի հետ շփվելու և աշխատելու հիմունքներ		8տ		18	5	13							18
	ԸՆԴԱՄԵՆԸ				390	83	307						72	318
6.	**ԸՆՏՐՈՎԻ**				**54**								**31**	**23**
	ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ԺԱՄԵՐ				**46**								6	40
	ԸՆԴԱՄԵՆԸ				1116								576	540
	ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ				**100**									
	Շաբաթվա ժամերի քանակը												36	36

	IV. ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ			N	VII. ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿԱԲԻՆԵՏՆԵՐԻ, ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ԵՎ ԱՐՀԵՍՏԱՆՈՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ
1	Գործարար խաղեր				ԿԱԲԻՆԵՏՆԵՐ
2	Վարվելակերպի հիմունքներ			1	Հայոց լեզու
3				2	Օտար լեզու
4				3	հումանիտար առարկաների
				4	հագուստի մոդելավորման և նախագծման
	V. ՊՐԱԿՏԻԿԱ	Կիսամյակ	Շաբաթ	5	Նյութագիտության, հագուստի պատրաստման տեխնոլոգիա
1	Ուսումնական	8-րդ	6		Կարի արտադրության սարքավորումներ
2	Արտադրական	8-րդ	3		Ընդհանուր հումանիտար և սոցիալ տնտեսագիտական առարկաների
3					
	ԸՆԴԱՄԵՆԸ		9		
VI. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ Պետական քննություն տեսական հարցերից Գործնական աշխատանք (կարել հագուստ)					
					ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ
				1	Կարի արտադրության
				2	Համակարգչային տեխնիկայի
					ԱՐՀԵՍՏԱՆՈՑՆԵՐ
				1	
					ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ
				1	Սպորտային դահլիճ և բաց մարզահրապարակ

VIII. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

1. Ուսանողների գիտելիքների յուրացման և ձեռք բերած հմտությունների մակարդակը ստուգելու, ինչպես նաև ուսումնառության արդյունավետությունը վերահսկելու նպատակով, ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ կարող են անցկացվել ընթացիկ /միջանկյալ/ քննություններ, ստուգարքներ, ստուգողական աշխատանքներ: Ստուգարքներն, այդ թվում՝ տարբերակված, անցկացվում են առարկայի համար սահմանված ժամերի հաշվին:

Ըստ առարկաների՝ ստուգողական աշխատանքների թիվը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը: Քննությունների և ստուգարքների անցկացման կարգը սահմանում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:

2. Լաբորատոր աշխատանքների, օտար լեզուների, համակարգչային, գործնական, սեմինար, ֆիզիկական կուլտուրայի ,ինչպես նաև ուսումնամեթոդական խորհրդի կողմից երաշխավորած առանձին առարկաների գծով ուսումնական պարապմունքների, կուրսային նախագծման և արհեստանոցներում արտադրական ուսուցման ժամանակ ուսումնական խումբը բյուջետային ֆինանսավորման դեպքում կարող է բաժանվել ենթախմբերի՝ յուրաքանչյուրում առնվազն 8 ուսանող՝ ելնելով ուսուցանվող առարկայի յուրահատկությունից: Ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ առանձին առարկաների տեսական դասընթացը կարող է կազմակերպվել հոսքային պարապմունքի ձևով:
3. Նախասիրական առարկաները, դրանց ծավալը և ուսուցման ժամկետը,բայց ոչ ավելի, քան շաբաթը 4 ժամ, որոշում է քոլեջը: Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների կողմից ներկայացված նախասիրական առարկաների ծրագիրը հաստատում է քոլեջի ուսումնամեթոդական խորհուրդը:
4. Ֆիզիկական կուլտուրայի առարկայական ծրագրով նախատեսված նյութը կարող է իրացվել նաև արտաուսումնական պարապմունքների տարբեր ձևերով՝ մարզական ակումբներում, սեկցիաներում, խմբակներում:
5. Ուսումնական գործընթացի ժամանակացույցը, ելնելով տեղական պայմաններից, կարելի է փոփոխել՝ պարտադիր պահպանելով տեսական և գործնական ուսուցման, մոդուլների ամփոփման, պրակտիկայի, արձակուրդի

ընդհանուր տևողությունը:

6. Առանց տեսական ուսուցման ուսումնական պրակտիկայի ընթացքում ուսանողը կատարելագործում է մոդուլների ուսուցման ժամանակ ձեռք բերած կարողությունները:
7. Պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հանձնարարված փաստաթղթերի ուսումնասիրումը կատարվում է համապատասխան առարկաների ժամերի հաշվին:
8. Պահուստային ժամերը տնօրինում է քոլեջը՝ ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության սահմանած կարգի պահանջներին համապատասխան:
9. Ուսումնական պրակտիկան կարող է անցկացվել կենտրոնացված, կամ տեսական պարապմունքների հետ հաջորդաբար՝ պահպանելով պլանով նախատեսված ժամաքանակը: Պրակտիկայի անցկացման ժամկետը կարելի է տեղաշարժել ուսումնական տարվա նույն կիսամյակի ընթացքում: Պրակտիկայի յուրաքանչյուր ձև ավարտվում է հաշվետվությամբ՝ գնահատումով:
10. Նախաավարտական պրակտիկան անց է կացվում կենտրոնացված կարգով, ուսումնական պլանով նախատեսված ժամկետներում:
11. Քոլեջը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ստեղծել լրացուցիչ կաբինետներ, մասնագիտացված լսարաններ:

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

Մոդուլի դասիչը՝ ԱՀՀ 3- 08 - 001

Մոդուլի նպատակը՝

Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել աշխատանքնային ու մասնագիտական գործունեության ընթացքում, ինչպես նաև անձնական կյանքում արդյունավետ և ակտիվ հաղորդակցվելու կարողություններ:

Մոդուլի տևողությունը՝ 36 ժամ

Դասախոսություն՝ 18 ժամ

Գործնական պարապմունքներ՝ 18 ժամ

Մուտքային պահանջները՝ Չկան

Ուսումնառության արդյունքները՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. **սահմանի ուսումնառության անձնական նպատակները.**
2. **բանավոր և գրավոր տեղեկատվական հաղորդում կատարի պարզ թեմաների և տեքստերի մասին.**
3. **նախաձեռնի, պահպանի, եզրափակի երկխոսություններ և քննարկումներ.**
4. **մեկնաբանի սխեմաներ, աղյուսակներ, դիագրամներ, քարտեզներ և նկարներ.**
5. **կատարի փաստաթղթավորում:**

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Սահմանել ուսումնառության անձնական նպատակները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. Ճիշտ է սահմանում ուսումնառության անձնական նպատակները,

բ. Ճիշտ է պլանավորում և կիրառում ուսումնառության անձնական նպատակների ձեռքբերմանն ուղղված ուսումնառության գործընթացները,

գ. Ճիշտ է սահմանում ուսումնառության տարբեր եղանակները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Սովորողին կհանձնարարվի սահմանել ուսումնառության անձնական նպատակները, պլանավորել և կիրառել ուսումնառության անձնական նպատակների ձեռքբերմանն ուղղված ուսումնառության գործընթացները,սահմանել ուսումնառության տարբեր եղանակները: Կտրվեն մի շարք թեստային և հոգեբանական հարցեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Դասախոսություն՝ 2 ժամ

Գործնական պարապմունքներ՝ 2 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Բանավոր և գրավոր տեղեկատվական հաղորդում կատարել պարզ թեմաների և տեքստերի մասին.

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. օգտագործում է բանավոր և գրավոր խոսքի համապատասխան կառուցվածք,

բ. հաղորդումը պարունակում է պարզ տեղեկատվություն, կարծիքներ կամ գաղափարներ,

գ. տեղեկատվության առանձնացում/խմբավորումը կատարում է նպատակային,

դ. հաղորդումը իրականացնում է՝ հաշվի առնելով իրավիճակը և լսարանը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Սովորողին կհանձնարարվի բանավոր և գրավոր տեղեկատվական հաղորդում կատարել պարզ թեմաների և տեքստերի մասին: Կտրվեն մի շարք թեստային և հոգեբանական հարցեր, ինչպես նաև կառաջադրվեն տեղեկատվության նպատակային խմբավորման աշխատանքներ բանավոր և գրավոր խոսքի համապատասխան կառուցվածը ստուգելու նպատակով:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ առավելագույնս նմանացված

աշխատանքային իրավիճակին: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Դասախոսություն՝ 4 ժամ

Գործնական պարապմունքներ՝ 2 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Նախաձեռնել, պահպանել, եզրափակել երկխոսություններ և քննարկումներ.

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է կիրառում «ակտիվ ունկնդրման» ժամանակ օգտագործվող հմտությունները, ինչպիսիք են՝
- պարզաբանումներ ստանալու ձգտումը,
- գրառումներ կատարելը,
- ամփոփելը,

բ. ազատ կերպով ձևակերպում, արտահայտում և պաշտպանում է իր գաղափարները, տեսակետներն ու կարծիքները,

գ. ցուցաբերում է համոզելու կարողություն,

դ. կատարում է ճիշտ ամփոփում/եզրափակում:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Սովորողին կառաջադրվեն իրավիճակներ, որտեղ կարող է պաշտպանել իր գաղափարները, կտրվեն խնդիրներ և երկխոսության ընթացքում դիմացինին համոզելու, իր խոսքն ամփոփելու, եզրակացություն անելու կարողությունները ստուգելու վերաբերյալ:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների, առաջադրվող խնդիրների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ առավելագույնս նմանացված աշխատանքային իրավիճակին: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Դասախոսություն՝ 4 ժամ

Գործնական պարապմունքներ՝ 4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Մեկնաբանել սխեմաներ, աղյուսակներ, դիագրամներ, քարտեզներ և նկարներ.

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է նախանշում սխեմաների, աղյուսակների, դիագրամների, քարտեզների և նկարների նշանակությունը և նրանց միջև եղած տարբերությունները,

բ. ճիշտ է մեկնաբանում առաջադրված սխեմաները, աղյուսակները, դիագրամները, քարտեզները և նկարները.

գ. մեկնաբանման ընթացքում օգտագործում է խոսքի համապատասխան կառուցվածք:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին առաջադրվում են սխեմաներ, աղյուսակներ, դիագրամներ, քարտեզներ և նկարներ, մեկնաբանման, դրանց նշանակությունը և նրանց միջև եղած տարբերությունները ներկայացնելու կարողությունները ստուգելու նպատակով:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների, սխեմաների, աղյուսակների, դիագրամների, քարտեզների և նկարների միջոցով: Կիրառվում են ձևաթղթեր, ձևաչափեր, այլ դիտակտիկ նյութեր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Դասախոսություն՝ 2 ժամ

Գործնական պարապմունքներ՝ 4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 5. Կատարել փաստաթղթավորում:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. Ճիշտ է սահմանում տարբեր փաստաթղթերը՝ ըստ դրանց նշանակության,

բ. Ճիշտ է նախանշում տարբեր փաստաթղթերի օգտագործման տեղն ու դերը,

գ. Ճիշտ է կատարում տարբեր տեսակի տեղեկատվությունների փաստաթղթավորումը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին տրամադրվում են տարբեր փաստաթղթեր՝ պահանջելով ըստ նշանակության խմբավորում և տեղեկատվությունների փաստաթղթավորում՝ ըստ տեսակների:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների, տարբեր փաստաթղթերի օգտագործման, տարբեր տեսակի տեղեկատվությունների փաստաթղթավորման միջոցով: Կիրառվում են ձևաթղթեր, ձևաչափեր, այլ դիտակտիկ նյութեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Դասախոսություն՝ 6 ժամ

Գործնական պարապմունքներ՝ 6 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ»

Մոդուլի դասիչը՝ ԱԱՕ3-08-001

Մոդուլի նպատակը՝

Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել ձեռնարկություններում աշխատանքային անվտանգության կանոնների պահպանման, աշխատանքի պաշտպանության միջոցառումների իրականացման և առաջին օգնության կազմակերպման կարողություններ:

Մոդուլի տևողությունը՝ 36 ժամ

Տեսական ուսուցում 20 ժամ

Գործնական աշխատանք 16 ժամ

Մուտքային պահանջները՝ Չկան

Ուսումնառության արդյունքները՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. **իմանա աշխատանքի պաշտպանության իրավական և կազմակերպչական դրույթները.**
2. **իմանա անվտանգության տեխնիկայի նորմերը և կանոնները ձեռնարկություններում.**
3. **իմանա արտադրական սանիտարիայի և հիգիենայի պահանջները.**
4. **ցուցաբերի առաջին օգնություն:**

Գնահատման կարգը Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Իմանալ աշխատանքի պաշտպանության իրավական և կազմակերպչական դրույթները.

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. Ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության վերաբերյալ իրավական ակտերը.

բ. Ճիշտ է ներկայացնում ձեռնարկություններում աշխատանքի պաշտպանության կազմակերպման ներքին նորմատիվային փաստաթղթերը.

գ. Ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների խախտման հետ կապված պատասխանատվությունը.

դ. Ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողության ձևերը և մեխանիզմները:

ե. Ճիշտ է ներկայացնում արտադրությունում դժբախտ դեպքերի և պատահարների հետաքննության, փաստաթղթավորման և հաշվառման կարգը.

զ. Ճիշտ է ներկայացնում արտադրության տարբեր մակարդակների ղեկավարների պատասխանատվությունը աշխատանքի պաշտպանության նորմերի պահպանման վերաբերյալ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կոնկրետ հարցեր կառաջադրվեն աշխատանքի պաշտպանության բնագավառում գործող օրենքների, այլ նորմատիվ ակտերի, ձեռնարկություններում աշխատանքի պաշտպանության կազմակերպման ընդհանուր հարցերի վերաբերյալ:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ցուցաբերում է նյութի անհրաժեշտ իմացություն:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տեսական ուսուցում: Անհրաժեշտ է ունենալ աշխատանքի պաշտպանության բնագավառի օրենքներ, այլ նորմատիվ ակտեր, ուսումնական գրականություն, հրահանգներ, լրացվող փաստաթղթերի նմուշներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Իմանալ անվտանգության տեխնիկայի նորմերը և կանոնները ձեռնարկություններում:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. Ճիշտ է ներկայացնում տեխնոլոգիական սարքավորումների, մեխանիզմների շահագործման անվտանգության տեխնիկայի հիմնական պահանջները.

բ. Ճիշտ է ներկայացնում էլեկտրաանվտանգության կանոնները և պաշտպանությունը.

գ. Ճիշտ է ներկայացնում հակահրդեհային պաշտպանության կանոնները.

դ. Ճիշտ է ներկայացնում ճնշման տակ աշխատող սարքավորումների և մեխանիզմների անվտանգ շահագործման կանոնները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կտրվի թեսթ՝ ոչ պակաս 10 հարցերով, յուրաքանչյուր հարցի վերաբերյալ առնվազն 3 պատասխանով, որոնցից մեկը ճիշտ է: Ուսանողը պետք է նշի, թե յուրաքանչյուր կոնկրետ հարցում որն է ճիշտ պատասխանը: Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե թեսթի հարցերին տրվեն անսխալ պատասխաններ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Ուսուցման համար անհրաժեշտ է ունենալ ուսումնական գրականություն, անվտանգության կանոնների հրահանգներ, անվտանգության նպատակներով օգտագործվող միջոցներ և այլն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում՝ 6 ժամ
Գործնական աշխատանք՝ 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Իմանալ արտադրական սանիտարիայի և հիգիենայի պահանջները.

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. Ճիշտ է ներկայացնում արտադրական սանիտարիայի և հիգիենայի հասկացությունները.

բ. Ճիշտ է ներկայացնում արտադրական միկրոկլիմայի նկատմամբ նորմատիվային պահանջները.

գ. Ճիշտ է թվարկում արտադրական աղմուկից և ցնցումներից պաշտպանվելու միջոցները.

դ. Ճիշտ է ներկայացնում արտադրական լուսավորվածությանը ներկայացվող պահանջները և նորմերը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կտրվեն կոնկրետ հարցեր և անհրաժեշտ գրականություն: Օգտվելով գրականությունից՝ նա պետք է կարողանա գտնել հարցերի ճիշտ պատասխանները, իսկ ըստ իրավիճակների՝ նորմաները: Բացի դրանից ուսանողը պետք է բավարար գրագիտություն ցուցաբերի այս կամ այն խախտման վնասակար և վտանգավոր հետևանքների վերաբերյալ:

Ստորև բերվում են արտադրական միկրոկլիմայի և սանիտարահիգիենիկ պայմանների բաղադրիչները.

ա. արտադրական միկրոկլիմայի բաղադրիչներ՝
- ջերմաստիճանը
- հարաբերական խոնավությունը
- փոշու առկայությունը

բ. սանիտարահիգիենիկ պայմանների բաղադրիչներ՝
- օդափոխություն
- ջեռուցում
- ջրամատակարարում, ջրահեռացում և այլն:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ընդհանուր առմամբ տրվում են ճիշտ պատասխաններ՝ աննշան թերություններով:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Ուսումնական պրոցեսում անհրաժեշտ է օգտագործել ուսումնական և նորմատիվային տեղեկատվական գրականություն, գործիքներ, սարքավորումներ: Նպատակահարմար է գործնական պարապմունքներ անցկացնել արտադրամասում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում՝ 6 ժամ
Գործնական աշխատանք՝ 4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Ցուցաբերել առաջին օգնություն:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. Ճիշտ է ցուցադրում արհեստական շնչառության իրականացումը.

բ. Ճիշտ է ցուցադրում սրտի աշխատանքի վերականգնման իրականացումը.

գ. Ճիշտ է ցուցադրում արյան հոսքի դադարեցման իրականացումը և ճիշտ է դնում վիրակապ.

դ. Ճիշտ է վիրակապում կոտրվածքները.

ե. Ճիշտ է ցուցադրում այրվածքների դեպքում առաջին օգնության ցուցաբերումը.

գ. Ճիշտ է ցուցադրում էլեկտրահարման դեպքում առաջին օգնության իրականացումը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողը կոնկրետ գործողությունով պետք է ցույց տա մի քանի իրավիճակներում առաջին օգնության ցուցաբերելու կարգը:
Արդյունքի ձեռքբերումը բավարար կհամարվի, եթե ճիշտ ցուցաբերվի առաջին օգնությունը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տեսական ուսուցում և գործնական պարապմունք: Ուսուցման համար անհրաժեշտ է ունենալ առաջին օգնությանը վերաբերող գրականություն, տեսաֆիլմեր, պլակատներ, առաջին օգնության միջոցներ և այլն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում՝ 2 ժամ
Գործնական աշխատանք՝ 6 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

Մոդուլի դասիչը՝ ԸԱՀ-3-08-001

Մոդուլի տևողությունը 54 ժամ՝
Տեսական ուսուցում՝ 24 ժամ
Գործնական պարապմունքներ՝ 30 ժամ

Մոդուլի նպատակը՝

Մոդուլի նպատակն է ուսանողին տալ գիտելիքներ աշխատանքային գործունեության ընթացքում հաջողության հասնելու նախապայմանների մասին, ինչպես նաև ձևավորել ցանկացած բնագավառում անհրաժեշտ աշխատանքային կուլտուրա և էթիկա դրսևորելու, ղեկավարի և գործընկերների հետ արդյունավետ հարաբերվելու, առաջացած աշխատանքային խնդիրներն ընկալելու և համապատասխան լուծումներ տալու կարողություններ:

Մուտքային պահանջները՝ Չկան

Ուսումնառության արդյունքները՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. **տիրապետի աշխատանքի տեղավորվելու կարողությունների.**
2. **դրսևորի անհրաժեշտ վերաբերմունք աշխատանքի և աշխատավայրի նկատմամբ.**
3. **տիրապետի աշխատանքի կուլտուրային և էթիկային, արդյունավետ աշխատի թիմում.**
4. **իմանա աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները և պատշաճ հարաբերվի ղեկավարի հետ.**
5. **դրսևորի քննադատական մտածողություն.**
6. **կառավարի սթրեսը և ժամանակը, առաջացած պրոբլեմներին և կոնֆլիկտներին տա համապատասխան լուծումներ:**

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Տիրապետել աշխատանքի տեղավորվելու կարողությունների

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. Ճիշտ է շարադրում գործող աշխատանքային օրենսգրքի անհրաժեշտ դրույթները.
բ. Ճիշտ է ներկայացնում աշխատանքի որոնման ժամանակակից միջոցները և տեխնոլոգիաները, աշխատանքի ընդունվելու և աշխատանքից ազատվելու համար անհրաժեշտ բոլոր գործընթացները.
գ. Ճիշտ է կազմում գրավոր ինքնակենսագրություն (CV).
դ. Ճիշտ և մանրամասն բանավոր ներկայացնում է իր կենսագրությունը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական կատարման հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը ճիշտ է կազմում ինքնակենսագրությունը (CV) և մանրամասն բնավոր ներկայացնում իր կենսագրությունը:

ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում նաև տեսաֆիլմեր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 6 ժամ
Գործնական պարապմունք՝ 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Դրսևորել անհրաժեշտ վերաբերմունք աշխատանքի և աշխատավայրի նկատմամբ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. Ճիշտ է ներկայացնում աշխատանքի և շրջապատի նկատմամբ դրական տրամադրվելու կարողությունները.

բ. ճիշտ է ներկայացնում գործերընկերների նկատմամբ հարգալից վերաբերմունքի և արդյունավետորեն հարաբերվելու օրինակներ.

գ. առաջադրված իրավիճակում ցուցաբերում է պատասխանատվության դրսևորումներ.

դ. ցուցաբերում է գործընկերոջը և ղեկավարին ուշադիր լսելու և հասկանալու դրսևորումներ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը տվել է հիմնավոր և ճիշտ պատասխաններ:

ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում նաև տեսաֆիլմեր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 2 ժամ

Գործնական պարապմունք՝ 3 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Տիրապետել աշխատանքի կուլտուրային և էթիկային, արդյունավետ աշխատել թիմում:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է ներկայացնում կազմակերպության նպատակները, արժեքները և կիրառվող ընդհանուր աշխատանքային մեթոդները, աշխատանքային և միջանձնային հարաբերությունները.

բ.ճիշտ է ներկայացնում թիմային աշխատանքի հիմնական սկզբունքները.

գ.ճիշտ է ներկայացնում թիմային խնդիրների լուծման մեթոդները,

դ.թիմային աշխատանքի առաջադրված իրավիճակում դրևորում է անհրաժեշտ վարքագիծ՝ ցուցաբերելով փոխօգնություն, համբերատարողություն, նվիրվածություն աշխատանքին և ընկերներին:

ե.ճիշտ վերաբերմունք է դրսևորում և հարգալից է կոնֆլիկտային գործընկերների նկատմամբ.

զ.առաջարկում է խնդրի ճիշտ լուծումներ առաջադրված պրոբլեմային իրավիճակում:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը ըստ առաջադրված իրավիճակի հանդես է բերում կառուցողական քննադատություն ցուցաբերելու կարողություն:

ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում նաև տեսաֆիլմեր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 4 ժամ

Գործնական պարապմունք՝ 8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Իմանալ աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները և պատշաճ հարաբերվել ղեկավարի հետ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է բացատրում աշխատանքային կարգապահության և ճշտապահության կարևորությունը.

բ. ճիշտ է ներկայացնում ղեկավարի հետ հարաբերվելու ձևերը, իր և ղեկավարի իրավունքներն ու պարտականությունները.

գ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի արդյունավետության ու որակի ապահովման ընդհանուր սկզբունքները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը ըստ առաջադրված իրավիճակի հանդես է բերում կառուցողական քննադատություն ցուցաբերելու կարողություն:

ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում նաև տեսաֆիլմեր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 2ժամ

Գործնական պարապմունք՝ 2 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 5. Դրսևորել քննադատական մտածողություն:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. Ճիշտ է գնահատում տեղեկատվության հուսալիության և զգացմունքայնության աստիճանը.

բ. ստացած տեղեկատվությունը ճիշտ և արդյունավետորեն համադրում է առկա գիտելիքների հետ.

գ. իրականացնում է կառուցողական քննադատություն և ճիշտ է բացատրում կառուցողական քննադատության կարևորությունը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը ըստ առաջադրված իրավիճակի հանդես է բերում կառուցողական քննադատություն ցուցաբերելու կարողություն:

ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում նաև տեսաֆիլմեր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 4 ժամ

Գործնական պարապմունք՝ 3 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 6. Կառավարել սթրեսը և ժամանակը, լուծել պրոբլեմներ և կոնֆլիկտներ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. Ճիշտ է ներկայացնում սթրեսի կանխարգելման և անխուսափելի սթրեսին դիմակայելու մեթոդները.

բ. Ճիշտ է կազմում իր աշխատաքնային պլանը (պայմանական աշխատանքային պլան).

գ. Ճիշտ է ներկայացնում ժամանակի արդյունավետ օգտագործման միջոցները:

դ. բացահայտում է և ճիշտ է սահմանում պրոբլեմը տրված իրավիճակում,

ե. Ճիշտ է վերլուծում պրոբլեմը, տալիս է լուծման ճիշտ տարբերակ և գնահատում արդյունքը.

զ. բացահայտում է ցանկացած կոնֆլիկտի պատճառները.

է. Ճիշտ է ներկայացնում կոնֆլիկտի կանխարգելման եղանակները, կարողանում է դրանց տալ արագ ու արդյունավետ լուծումներ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը ճիշտ է ներկայացնում սթրեսին դիմակայելու մեթոդները և ճիշտ կազմում պայմանական աշխատանքային պլանը ըստ առաջադրված իրավիճակի առաջարկում է պրոբլեմի լուծման ճիշտ տարբերակ, ճիշտ է ներկայացնում կոնֆլիկտի պատճառները և առաջարկում ճիշտ լուծումներ:

ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, աշխատանքային պլանների օրինակներ, անհրաժեշտության դեպքում տեսաֆիլմեր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 6 ժամ

Գործնական պարապմունք՝ 8 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»

Մոդուլի դասիչը՝ SS 3 - 08 - 001

Մոդուլի նպատակը՝

Այս մոդուլը նախատեսում է տալ տարրական գիտելիքներ MICROSOFT WORD տեքստային խմբագրի մասին, ուսանողի մոտ զարգացնել տեքստային փաստաթղթերի պատրաստման, խմբագրման, դրանց ֆորմատավորման ու ձևավորման, ինչպես նաև փաստաթղթերի պահպանման, տպագրման և ինտերնետ ցանցում աշխատելու տարրական հմտություններ:

Մոդուլի տևողությունը՝ 54 ժամ

Տեսական ուսուցում 12 ժամ

Գործնական աշխատանք 42 ժամ

Մուտքային մակարդակը՝ Այս մոդուլը ուսումնասիրելու համար նախնական հմտություններ և կարողություններ չեն պահանջվում:

Ուսումնառության արդյունքները՝

Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը՝

1. **կհասկանա WORD ծրագրի նշանակությունը, կկարողանա բացատրել ծրագրի կառուցվածքը, կկարողանա օգտագործել New, Open, Close գործիքները, կկարողանա տեղաշարժել տեքստային ցուցիչը տեքստի մեջ, կկարողանա փակել WORD ծրագիրը,**
2. **կկարողանա կատարել տեքստային փաստաթղթի մուտքագրման, խմբագրման, ֆորմատավորման տարրական գործողություններ,**
3. **կկարողանա պահպանել փաստաթուղթը,**
4. **կկարողանա կազմել և խմբագրել աղյուսակներ,**
5. **կկարողանա տեքստային փաստաթղթերում ներդնել գրաֆիկական օբյեկտներ, դրանց հետ կատարել տարրական խմբագրման գործողություններ,**
6. **կկարողանա տպագրել փաստաթուղթը:**
7. **կունենա ինտերնետում աշխատելու իմացություն**

Գնահատման կարգը

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1 WORD ԾՐԱԳԻՐ (ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ</u>

- *իմանալ* Microsoft Word ծրագրի պատուհանի կառուցվածքը
- *բացել* նոր փաստաթուղթ
- ստեղնաշարի օգնությամբ *մուտքագրել*
  - տեքստ (առանց ֆորմատավորման)
  - մեծատառ նշաններ (SHIFT կոճակի օգնությամբ)
  - սիմվոլներ (SHIFT կոճակի օգնությամբ)
  - թվանշաններ
- *տեղաշարժել* Տեքստային ցուցիչը տեքստի մեջ
- *կատարել* տարրական ուղղումներ տեքստում
- *փակել* փաստաթուղթը
- *բացել* առկա փաստաթուղթը
- *իմանալ* Zoom գործիքի հնարավորությունները

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

1. Ուսանողը բացում է Word ծրագիրը և բանավոր ներկայացնում նրա կառուցվածքը:
2. Ուսանողին մուտքագրելու համար տրվում է 2-3 պարբերություններից բաղկացած, ամենաշատը 100 բառ, թվանշաններ և սիմվոլներ պարունակող տեքստ: Ուսանողը պետք է բացի նոր փաստաթուղթ, կատարի մուտքագրումը և պահպանի այն նախօրոք առաջարկված տեղում:
3. Ուսանողը բացում է իր հավաքած և պահպանած փաստաթուղթը ու ցուցադրում է ստեղնաշարով Տեքստային Ցուցիչի տեղաշարժման հնարավորությունները:
4. Ուսանողը ցուցադրում է փաստաթղթի և Word ծրագրի փակման ձևերը:

Արդյունքի յուրացումը բավարար է համարվում, եթե առաջադրանքը ընդհանուր առմամբ ճիշտ է կատարվում, թույլ են տրված որոշ անճշտություններ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում և գործնական աշխատանք:

Ուսուցումն իրականացվում է անհատական համակարգիչների կաբինետում: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան ցուցադրական նյութեր, պրոյեկտոր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում 2 ժամ

Գործնական աշխատանք 4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2 . Տեքստերի տարրական ֆորմատավորում

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- *պատրաստել* Word ծրագիրը հայերեն և օտար լեզվով տեքստ մուտքագրելու համար
- *նշել* բառերը և տեքստային հատվածները
- *կատարել* մուտքագրված տեքստի պարզագույն *ֆորմատավորում*
- *կատարել* տողերի հավասարեցում
- *փոխել* միջտողային տարածությունները
- *փոխել* տեքստի գույնը Font Color գործիքով
- *փոխել* տեքստի գունային ֆոնը Highlight գործիքով
- *փոխել* պարբերության խորությունները լուսանցքներից
- *չեղյալ հայտարարել* (հրաժարվել) ֆորմատավորման կատարված գործողությունները
- *վերականգնել* ֆորմատավորման չեղյալ հայտարարված գործողությունները
- *կրկնել* ֆորմատավորման վերջին գործողությունը
- Մենյուի File\Page Setup հրամանի օգնությամբ
    - փոխել լուսանցքների խորությունները Top, Bottom, Left, Right թվային դաշտերի օգնությամբ
    - ընտրել էջի ուղղաձիգ (Portrait) կամ հորիզոնական (Landscape) դիրքերը
    - ընտրել թղթի չափերը Paper Size ցուցակի օգնությամբ
- *պատճենել* տեքստը
- *տեղափոխել* տեքստը
- *տողադարձել* տեքստը
- *համարակալել* էջերը մենյուի Insert\Page Numbers... հրամանով

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

1. Ուսանողին մուտքագրելու համար տրվում մոտ 50 բառ պարունակող հայերեն տեքստ:
2. Ուսանողին մուտքագրելու համար տրվում է մոտ 100 բառից կազմված՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն բառեր պարունակող, թվանշաններով և տարբեր սիմվոլներով տեքստ:
3. Ուսանողը բացում է նախօրոք պատրաստված փաստաթուղթը և ցուցադրում է մկնիկով և ստեղնաշարով տեքստը նշելու հնարավորությունները:
4. Ուսանողին տրվում է տարրական ֆորմատավորումներ պարունակող տպագրված փաստաթղթի օրինակ, որի վրա հասկանալի կերպով բացատրված են օգտագործված ֆորմատավորումները: Ուսանողը պետք է համակարգչի մեջ առկա նույն տեքստի չֆորմատավորված տարբերակի վրա կիրառի առաջարկված ֆորմատավորումները:
5. Ուսանողը պատրաստի փաստաթղթի օրինակի վրա ցուցադրում է տեքստի պատճենահանման և տեղափոխման գործողությունները:
6. Ուսանողը կատարում է տողադարձումներ իրեն տրված պատրաստի փաստաթղթի օրինակի վրա:

Արդյունքի յուրացումը բավարար է համարվում, եթե հիմնական մասերով առաջադրանքները ճիշտ են կատարվում, սակայն հնարավոր են աննշան, ոչ էական բացթողումներ, վրիպակներ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Ուսուցումն իրականացվում է անհատական համակարգիչների կաբինետում: Անհրաժեշտ է ունենալ ցուցադրական նյութեր, պրոյեկտոր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում 4 ժամ

Գործնական աշխատանք 8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Փաստաթղթի պահպանում

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- *իմանալ* փաստաթղթերի պահպանման իմաստը
- *պահպանել* նոր ստեղծված փաստաթուղթը
- *պահպանել* փաստաթղթում կատարված ընթացիկ ֆորմատավորումները և փոփոխությունները

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

1. Ուսանողը պետք է նկարագրի փաստաթղթերի պահպանման իմաստը, բերի տրամաբանական օրինակներ:
2. Ուսանողը մուտքագրում է մինչև 50 բառից բաղկացած տեքստ և պահպանում է այն՝ օգտագործելով Save As... պատուհանը:
3. Ուսանողին տրվում է պատրաստի մուտքագրված փաստաթուղթ, որի մեջ նա կատարում է փոփոխություններ: Հանձնարարվում է պահպանել կատարված ընթացիկ փոփոխությունները:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում առաջադրանքները ամբողջությամբ և առանց էական սխալների կատարելու դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Արդյունքի ուսուցումն իրականացվելու է գործնական պարապմունքների միջոցով: Պարապմունքներն անհրաժեշտ է իրականացնել անհատական համակարգիչների կաբինետում՝ ունենալով տարբեր փաստաթղթերի նմուշներ, որոնք անհրաժեշտ է ստեղծել և պահպանել:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Գործնական աշխատանք 2 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Աղյուսակների պատրաստում և խմբագրում

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- *պատրաստել* աղյուսակ
- աղյուսակի մեջ *մուտքագրել* տեքստ,
- *կատարել* ուղղումներ ու լրացումներ աղյուսակի մեջ
- *ավելացնել* նոր տողեր և նոր սյուներ աղյուսակի մեջ
- *ջնջել* աղյուսակի տողերը և սյուները
- *փոխել* սյունակի լայնությունը Մկնիկի օգնությամբ
- *փոխել* տողի բարձրությունը Մկնիկի օգնությամբ
- *փոխել* աղյուսակի գծերի գույնը
- *գունավորել* աղյուսակի տողը և սյունը

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

1. Ուսանողին տրվում է աղյուսակի տպագրված օրինակ: Ուսանողը պետք է պատրաստի աղյուսակը առաջարկված ձևով, մուտքագրի տեքստը, ֆորմատավորի աղյուսակը և տպագրի:
2. Ուսանողը բացում է նախօրոք պատրաստված աղյուսակը և կատարում է ֆորմատավորման գործողություններ դրա հետ, պահպանում է վերջնական տարբերակը և տպագրում: Գնահատումը կատարվում է տպագրված օրինակի հիման վրա:

Արդյունքի յուրացումը բավարար է համարվում, եթե առաջադրանքը կատարում է ճիշտ, սակայն թույլատրելի է նաև որոշ աննշան բացթողումներ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Ուսուցումն իրականացվում է անհատական համակարգիչների կաբինետում: Անհրաժեշտ է ունենալ աղյուսակների առավել տարածված և կիրառելի նմուշների օրինակներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում 2 ժամ

Գործնական աշխատանք 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 5 Գրաֆիկական խմբագրում և նկարազարդում

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- *գծագրել* գրաֆիկական օբյեկտներ
- *գծագրել* գրաֆիկական օբյեկտներ՝ օգտագործելով Autoshapes պատուհանի պատրաստի ձևերը
- *գծագրել* կանոնավոր պատկերներ
- *ֆորմատավորել* գրաֆիկական օբյեկտները՝
  - տեղափոխել դրանք փաստաթղթի տարբեր տարածքներ
  - պատճենել
  - պտտել
  - շրջել
  - փոխել չափերը
- *խմբավորել* գրաֆիկական օբյեկտները
- *հավասարեցնել* գրաֆիկական օբյեկտները իրար նկատմամբ
- *գծագրել* տեքստային բլոկներ
- *գունավորել* գրաֆիկական օբյեկտները
- *երանգավորել* գրաֆիկական օբյեկտները
- *ստվերավորել* գրաֆիկական օբյեկտները

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

1. Ուսանողին տրվում է երկրաչափական պատկերներ պարունակող փաստաթղթի տպագրված օրինակը: Ուսանողը պետք է պատրաստի այդ փաստաթուղթը և տպագրի: Գնահատումը կատարվում է բնօրինակի և տպագրված օրինակի համեմատության հիման վրա:
2. Ուսանողին տրվում է երկրաչափական պատկերներ պարունակող պատրաստի փաստաթուղթ: Նա այդ փաստաթղթի օրինակի վրա ցուցադրում է պատկերների ֆորմատավորման գործողությունները:

Արդյունքի յուրացումը բավարար է համարվում, եթե առաջադրանքներն ընդհանուր առմամբ ճիշտ է կատարվում, սակայն թույլատրելի է նաև որոշ աննշան թերություններ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Արդյունքի ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքների ձևով, անհատական համակարգիչների կաբինետում: Նպատակահարմար է ունենալ գրաֆիկական օբյեկտների նախապատրաստված ցանկ, որոնց հիման վրա աշխատելը հնարավորություն կտա ձեռք բերել արդյունքով սահմանված բոլոր կարողությունները:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Գործնական աշխատանք 8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 6. Փաստաթղթի տպագրում

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- Նախադիտման ռեժիմում *թերթել* փաստաթուղթը
- *իմանալ* Print պատուհանի ֆունկցիաները
- *տպագրել* փաստաթուղթը

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

1. Ուսանողին հանձնարարվում է բացել նախօրոք պատրաստված որևէ տեքստային փաստաթուղթ և տպագրել այն:
2. Ուսանողին հանձնարարվում է բացել նախօրոք պատրաստված որևէ տեքստային փաստաթուղթ և դրա օրինակի վրա բացատրել Print պատուհանի ֆունկցիաները:

Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե գործնական հանձնարարությունը ուսանողը կատարում է անսխալ, իսկ պատուհանի ֆունկցիաները բացատրելիս կարող է նաև որոշ անճշտություններ թույլ տալ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Արդյունքի ուսուցումը իրականացվելու է գործնական պարապմունքի միջոցով՝ անհատական համակարգիչների կաբինետում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Գործնական պարապմունք 2 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 7. Ինտերնետում աշխատելու իմացություն

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- *իմանալ* Ինտերնետ հասկացության նշանակությունը
- *ճանաչել* Internet Explorer ծրագիրը, իմանալ դրա նշանակությունը
- *իմանալ* Ինտերնետային Հասցե հասկացությունը
- *իմանալ* History հրամանի նշանակությունը
- *իմանալ* Favorites հրամանի նշանակությունը
- *իմանալ* Stop հրամանի նշանակությունը
- *իմանալ* Refresh հրամանի նշանակությունը
- *իմանալ* Back և Forward կոճակների նշանակությունը
- *պատճենել* տեքստային ինֆորմացիան ինտերնետային էջից
- *պատճենել* գրաֆիկական ինֆորմացիան ինտերնետային էջից
- *իմանալ* ինֆորմացիայի որոնման ինտերնետային ծառայությունները
- ըստ չափանիշների *որոնել* ինֆորմացիա
- ճիշտ օգտվելով ինֆորմացիայի որոնման ինտերնետային ծառայություններից,
- *իմանալ* էլեկտրոնային փոստի նշանակություն
- *ուղարկել* և *ստանալ* էլեկտրոնային նամակներ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

1. Ուսանողին հանձնարարվում է ներկայացնել Internet Explorer ծրագրի պատուհանի կառուցվածքը, նրա հիմնական կոճակների նշանակությունը:
2. Ուսանողին հանձնարարվում է ցուցադրել History և Favorites հրամանները, բացատրել:
3. Ուսանողին հանձնարարվում է բացատրել Stop և Refresh հրամանների նշանակությունը:
4. Ուսանողին հանձնարարվում է բացատրել Back և Forward կոճակների նշանակությունը:
5. Ուսանողին հանձնարարվում է բացել որևէ ինտերնետային էջ և պատճենել տեքստային և գրաֆիկական ինֆորմացիան այդ էջից:
6. Ուսանողին հանձնարարվում է կատարել ինֆորմացիայի որոնում որևէ թեմայի շուրջ՝ օգտագործելով ինտերնետային փնտրող ծառայությունները:
7. Ուսանողին հանձնարարվում է բացել նախօրոք պատրաստված էլեկտրոնային փոստը: Ուսանողը պետք է ցուցադրի էլեկտրոնային նամակների ուղարկման և ստացման գործողությունները, էլեկտրոնային փոստով ֆայլերի ուղարկման և ստացման քայլերը:

Արդյունքի յուրացումը համարվում է բավարար, եթե կատարողական մակարդակով առաջադրանքը ճիշտ է կատարվում, սակայն թույլատրվում է տարբերակների ընտրության որոշ շեղումներ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Ուսուցումն իրականացվում է անհատական համակարգիչների կաբինետում, որը ունի ինտերնետին միանալու հնարավորություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում 6 ժամ

Գործնական աշխատանք 12 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»

Մոդուլի դասիչը՝ **ԿԱՏԴ-3 -08-001**

Մոդուլի նպատակը՝

Մոդուլի նպատակն է սովորողին տալ «Դերձակ» արհեստավորին անհրաժեշտ մասնագիտական գիտելիքներ «Նյութագիտություն», «Հագուստի պատրաստման տեխնոլոգիա և սարքավորումներ», «Հագուստի մոդելավորում և նախագծում» առարկաներից:

Մոդուլի տևողությունը՝ 72 ժամ

Տեսական ուսուցում 18 ժամ

Գործնական աշխատանք 54 ժամ

Մուտքային պահանջները՝ Մոդուլն ուսումնասիրելուց առաջ պետք է ուսումնասիրել «Անվտանգություն և առաջին բուժօգնություն» մոդուլը:

Ուսումնառության արդյունքները՝ Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է.

1. իմանա դերձակի զբաղմունքի նկարագիրը, անհատական և մեքենայական արտադրամասում աշխատանքի կազմակերպման առանձնահատկությունները.
2. իմանա հագուստի պատրաստման գործում կիրառվող գործվածքների, լրացուցիչ նյութերի, ֆուրնիտուրայի առանձնահատկությունները, դրանց օգտագործման բնագավառները.
3. իմանա մարդու մարմնի չափային հատկանիշները, պատվերի համաձայն կարողանա կատարել չափումներ.
4. իմանա հագուստի նախագծման սկզբունքները:

Գնահատման կարգը

Մոդուլի ընդունելի կատարողականը՝ յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Պարզաբանումներ

Ուսումնական պարապմունքների ընթացքում ուշադրություն դարձնել նշված թեմաների վրա.

Գործվածքներ: Ֆիզիկամեխանիկական հատկությունները: Վերարկուների, կոստյումների, շրջազգեստ-վերնաշապիկների, աստառների համար նախատեսված գործվածքներ: Հարդարող նյութեր՝ ժապավեններ, տիսմաներ, շնուրներ, ժանյակներ: Ֆուրնիտուրայի պարագաներ: Ազգային հագուստի տարրերի օգտագործումը ժամանակակից հանդերձներում: Կանանց և տղամարդկանց հագուստի հիմնական ուրվագծերը: Մարդու մարմնի մասերի չափումների մեթոդները և տեխնիկան: Մարդու մարմնի տիպաչափային աղյուսակ: Հասկացություն հագուստի նախագծման մասին: Հիմքի ցանցի կառուցումը և չափերի տեղադրումը: Հագուստի ձևումը: Ձևվածքի նախապատրաստումը կարելուն: Մանր մասնիկների նյութածախսի հաշվարկը: Մանր մասնիկների մշակումը: Թիկնամասի, լանջերի, լանջափեշերի մշակումը: Հագուստի մասնիկների միացման եղանակները: Հագուստի պատրաստման տեխնոլոգիական հաջորդականությունը: Արտադրանքի վերջնամշակում: Ջերմախոնավամշակում: Կարի արտադրության մեջ օգտագործվող մեքենասարքավորումներ: Կարի մեքենայի ընդհանուր կառուցվածքը: Ասեղի և մաքոքի մեխանիզմների կառուցվածքը: Մեքենաների լիցքավորումը և խնամքը:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Իմանալ դերձակի զբաղմունքի նկարագիրը, անհատական և մեքենայական արտադրամասում աշխատանքի կազմակերպման առանձնահատկությունները:

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝</u>

ա. Ճիշտ է ներկայացնում դերձակի զբաղմունքի նկարագիրը.

բ. Ճիշտ է կահավորում աշխատատեղն այնպես, որ օգտագործվող պարագաները չխանգարեն աշխատանքային գործընթացին:

Գնահատման միջոցը

Բանավոր հարց ու պատասխան.

Ստորև ներկայացվում է՝

1. Դերձակի զբաղմունքի հիմնական տարրերը և ուղղությունները.
   1.1 Նախապատրաստել աշխատատեղը:
   1.2 Ընդունել պատվեր և կնքել կենցաղսպասարկման պայմանագիր:
   1.3 Ուրվագծել պատվերի էսքիզը և վերցնել հաճախորդի մարմնի չափերը:
   1.4 Անցկացնել չափափորձ:
   1.5 Հաճախորդին տալ մասնագիտական խորհուրդներ:
2. Աշխատանքի կազմակերպման առանձնահատկությունները.
   2.1 Անհատական պատվերի դեպքում՝ հաճախորդի հետ հաղորդակցվելու կարողություն, հարկային դաշտում աշխատելու հմտություն:
   2.2 Մեքենայացված արտադրամասում՝ հագուստի պատրաստման բոլոր օպերացիաներին տիրապետելու անհրաժեշտություն:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը առաջադրված հարցերին տալիս է տրամաբանական և գրագետ պատասխան:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ

Արդյունքը ձեռք է բերվել տեսական ուսուցման և գործնական պարապմունքների միջոցով:

Անհրաժեշտ է դասի կահավորման մեջ ունենալ մասնագիտական գրականություն, ինտերնետ կապով համակարգիչ, տեսաերիզ, պլակատներ, կարի մեքենայի հանգույցներ և օժանդակ պարագաներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ – 14 ժամ, որից

Տեսական – 4 ժամ

Գործնական – 10 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Իմանալ հագուստի պատրաստման գործում կիրառվող գործվածքների, լրացուցիչ նյութերի, ֆուրնիտուրայի առանձնահատկությունները, դրանց օգտագործման բնագավառները:

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝</u>

ա. տարբերում է քիմիական, բնական, մանրաթելերից պատրաստված գործվածքները,
բ. ճիշտ է ներկայացնում գործվածքների համեմատական բնութագրերը.
գ. ճիշտ է ներկայացնում լրացուցիչ նյութերի, ֆուրնիտուրայի օգտագործման բնագավառներն ու սկզբունքները.
դ. մոդելին համապատասխան՝ ճիշտ է ընտրում գործվածքը՝ հաշվի առնելով նորաձևության պահանջը.
գ. մոդելին համապատասխան՝ ճիշտ է ընտրում օժանդակ նյութերը և ֆուրնիտուրան:

Գնահատման միջոցը

Թեսթային հարցաշար.

Թեսթում տալ հագուստի արտադրության համար նյութերի ցանկը և հագուստի անվանումներ: Ուսանողը պետք է ընտրի հագուստին համապատասխանող նյութերը (օժանդակ, հարդարող նյութեր, աքսեսուարներ և այլն): Բանավոր հարցերով կարելի է ստուգել պատասխանների հիմնավորումը:

Գործնական վարժության միջոցով ուսանողը դրսևորում է մոդելին և պատվերին համապատասխան հագուստի պատրաստմանն անհրաժեշտ նյութերի ընտրության կարողություն:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը կատարում է առաջադրանքի առնվազն 80%-ը:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ

Արդյունքը ձեռք է բերվել տեսական ուսուցման և գործնական պարապմունքների միջոցով:

Դասի կահավորման կազմում անհրաժեշտ է ունենալ գործվածքի նմուշներ, աքսեսուարների տեսականի, նորաձևության վերաբերյալ ամսագրեր, ինտերնետ կապ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ – 12 ժամ, որից

Տեսական – 4 ժամ

Գործնական – 8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Իմանա մարդու մարմնի չափային հատկանիշները, պատվերի համաձայն կարողանա կատարել չափումներ.

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. Ճիշտ է օգտվում չափային տիպաբանության աղյուսակից.

բ. ըստ մոդելի ճիշտ է կատարում մարդու մարմնի չափումները:

Գնահատման միջոցը

Գործնական առաջադրանք.

Թեմա՝ Առաջադրված հագուստի համար (կիսաշրջազգեստ, անդրավարտիք և այլն) մարդու ֆիգուրայից կամ պայմանական պատվիրատուից (օրինակ՝ համակուրսեցուց) վերցնել անհրաժեշտ չափերը:

Արդյունքը համարվում է ձեռք բերված (գնահատվում է բավարար), եթե ուսանողը անթերի վերցրել է բոլոր անհրաժեշտ չափսերը, կարողանում է օգտվել չափաբանական աղյուսակներից:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ

Արդյունքը ձեռք է բերվել գործնական պարապմունքների և անհատական աշխատանքների միջոցով:

Դասի կահավորման կազմում անհրաժեշտ է ունենալ տղամարդկանց, կանանց և երեխաների չափային տիպոլոգիայի աղյուսակներ, մարդու ֆիգուրա, պլակատներ, գրականություն:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ – 16 ժամ, որից

Տեսական – 2 ժամ

Գործնական – 14 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Իմանալ հագուստի նախագծման սկզբունքները.

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. Ճիշտ է ներկայացնում հագուստի զարգացման պատմությունը.

բ. Ճիշտ է ներկայացնում հագուստի նախագծման հիմնական սկզբունքները:

Գնահատման միջոցը

Գործնական առաջադրանք և բանավոր հարց ու պատասխան.

Թեմա՝ Պատվերի համաձայն ձևել հագուստը:

Արդյունքը համարվում է ձեռք բերված (գնահատվում է բավարար), եթե ուսանողը ավարտում է ձևվածքը, մանր մասնիկների համար ռացիոնալ է օգտագործում գործվածքը, էական շեղում էսքիզից չի կատարում, սպառիչ և գրագետ պատասխանում է հագուստի պատմությանը վերաբերող հարցերի 90%-ին:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ

Արդյունքը ձեռք է բերվել գործնական պարապմունքների և անհատական աշխատանքների միջոցով:

Դասի կահավորման կազմում անհրաժեշտ է ունենալ գրականություն, ստանդարտների աղյուսակներ, լեկալներ, օժանդակ լեկալներ, ամսագրեր, ինտերնետ կապ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ – 30 ժամ, որից

Տեսական – 8 ժամ

Գործնական – 22 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ՁԵՌՔԻ ԵՎ ՄԵՔԵՆԱՅԻ ԿԱՐԱՏԵՍԱԿՆԵՐ»

Մոդուլի դասիչը՝ **ԿԱՏԴ -3-08-002**

Մոդուլի նպատակը՝

Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել կարածոներ մշակելիս կիրառվող ձեռքի և մեքենայի կարատեսակներ կատարելու կարողություններ:

Մոդուլի տևողությունը՝ 36 ժամ

Տեսական ուսուցում 4 ժամ

Գործնական աշխատանք 32 ժամ

Մուտքային պահանջները՝

Այս մոդուլը ուսումնասիրելու համար սովորողը պետք է անցած լինի ԱԱՕ 3-08-001, ԿԱՏԴ3-08-001 մոդուլները:

Ուսումնառության արդյունքները՝ Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է.

1. **կատարի ձեռքի կարատեսակներ,**
2. **կատարի մեքենայի կարատեսակներ:**

Գնահատման կարգը

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Կատարել ձեռքի կարատեսակներ

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. մասնիկներին համապատասխան՝ ճիշտ է ընտրում կարատեսակը,
բ. ճիշտ է պահպանում կարաբաժինները,
գ. ճիշտ է կատարում ձեռքի կարատեսակները,
դ. պահպանում է անվտանգության կանոնները:

Գնահատման միջոցը

Գործնական անհատական առաջադրանք.

Թեման՝ Սահմանված ժամանակահատվածում կատարել ձեռքի նշված կարատեսակներից 3-4-ը՝ շուլալակար, խաչկար, գաղտնակար, եղևնակար, եզրակար, ետկար, օդային օղակ, անցումային կար:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը կարատեսակներին համապատասխան ընտրում է մասնիկները, պահպանում է ծալաբաժինները և կարաբաժինները:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ

Արդյունքը ձեռք է բերվում գործնական աշխատանքի շնորհիվ:

Կարի արհեստանոցում անհրաժեշտ է ունենալ տարբեր տիպի թելեր, ձևվածքի հանգույցներ, ասեղ, մատնոց, պլակատներ, պատրաստի նմուշներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ – 16 ժամ, որից

Տեսական – 2 ժամ

Գործնական – 14 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Կատարել մեքենայի կարատեսակներ

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. կարատեսակին համապատասխան՝ ճիշտ է ընտրում կարի մեքենան,
բ. ճիշտ է լիցքավորում կարի մեքենան,
գ. ճիշտ է կատարում մեքենայական կարատեսակները,
դ. պահպանում է անվտանգության կանոնները:

Գնահատման միջոցը

Գործնական առաջադրանք և բանավոր հարցեր.

Թեման՝ սահմանված ժամանակահատվածում կատարել մեքենայի նշված կարատեսակներից 2-3-ը՝ միացման կար, թակալակար, վրադիր կար, միակողմանի կանթապատում, բաց կտրվածքով կար, զարդապատում, կանթապատում: Մեքենայի աշխատանքի վերաբերյալ կարելի է տալ բանավոր հարցեր:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը կարատեսակին համապատասխան ճիշտ է ընտրում մեքենան, կարողանում է լիցքավորել վերին և ստորին թելերը, տիրապետում է մեքենան գործարկելու և արգելակելու կարգին, պահպանում է անվտանգության կանոնները, բանավոր հարցերին տալիս է հիմնավորված պատասխաններ:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ

Արդյունքը ձեռք է բերվում գործնական պարապմունքների միջոցով:

Կարի արհեստանոցում անհրաժեշտ է ունենալ ուղիղ և եզրակարեր տվող մեքենաներ, տարբեր տիպի ձևված մասնիկներ, թելեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ – 20 ժամ, որից

Տեսական – 2 ժամ

Գործնական – 18 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ԳՐՊԱՆՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ»

Մոդուլի դասիչը՝ ԿԱՏԴ-3-08-003

Մոդուլի նպատակը՝

Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել կարածոների մասսայական և անհատական արտադրության մեջ օգտագործվող գրպանների մշակման տեխնոլոգիայի կիրառման կարողություն:

Մոդուլի տևողությունը՝ 36 ժամ

Տեսական ուսուցում 8 ժամ

Գործնական աշխատանք 28 ժամ

Մուտքային պահանջները՝ Այս մոդուլը ուսումնասիրելու համար սովորողը պետք է անցած լինի ԱԱՕ-3-08-001, ԿԱՏԴ-3-08-001 և ԿԱՏԴ-3-08-002 մոդուլները:

Ուսումնառության արդյունքները՝

Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է.

1. մոդելի էսքիզին համապատասխան ընտրի գրպանի չափերը, կատարի գործվածքի ծախսի հաշվարկ և ձևի գրպանի մասնիկները,
2. մշակի գրպանների տարբեր տիպեր՝ հենքային դետալների կտրվածքներին և չրթվածքներին համապատասխան,
3. կատարի գրպանի վերջնամշակում:

Գնահատման կարգը

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Մոդելի էսքիզին համապատասխան ընտրել գրպանի չափերը, կատարել գործվածքի ծախսի հաշվարկ և ձևել գրպանի մասնիկները

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝</u>

ա. ճիշտ է ընտրում գործվածքի հենքաթելերի ուղղությունը,

բ. ճիշտ է ընտրում գրպանի չափերը,

գ. գործվածքի ծախսի հաշվարկը ճիշտ է կատարում,

դ. գրպանի մասնիկները ձևում է մոդելին համապատասխան,

ե. գործվածքն օգտագործում է ռացիոնալ:

Գնահատման միջոցը

Գործնական աշխատանք.

Թեման՝ տրված էսքիզին համապատասխան ձևել գրպանի մասնիկները:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը ճիշտ է ընտրում գրպանի չափերը, գործվածքն օգտագործում է ռացիոնալ, ճիշտ է ընտրում գործվածքի հենքաթելի ուղղությունը:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ

Արդյունքը ձեռք է բերվում տեսական ուսուցման և գործնական պարապմունքների միջոցով:

Անհրաժեշտ է արհեստանոցում ունենալ գրատախտակ, գունավոր կավիճներ, մկրատ, կորաքանոններ, տարբեր տիպի գործվածքներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ – 12 ժամ, որից

Տեսական – 4 ժամ

Գործնական – 8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Մշակել գրպանների տարբեր տիպեր՝ հենքային դետալների կտրվածքներին և չրթվածքներին համապատասխան

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. ճիշտ է կատարում գրպանների մշակումը

բ. պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները

Գնահատման միջոցը

Գործնական աշխատանք.

Թեման՝ մշակել գրպանների նշված տիպերից որևէ մեկը սահմանված ժամանակահատվածում (ծոցագրպան, վրադիր գրպան, կողքի գրպան, կափարիչով գրպան, երկու կանթով, կտրված մուտքով գրպան և այլն):

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե գրպանը համապատասխանում է հենքային կտրվածքին և չռթվածքներին, համաձայն մոդելի ճիշտ է ընտրել տոպրակացուն:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ

Արդյունքը ձեռք է բերվում տեսական ուսուցման և գործնական պարապմունքների միջոցով:

Անհրաժեշտ է արհեստանոցում ունենալ գրատախտակ, գունավոր կավիճներ, մկրատ, կորաքանոններ, տարբեր տիպի գործվածքներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ – 14 ժամ, որից

Տեսական – 2 ժամ

Գործնական – 12 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Կատարել գրպանի վերջնամշակում

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. ճիշտ է ընտրում կարատեսակները,

բ. կարաբաժինները համապատասխանում են տեխնոլոգիական նորմերին,

գ. տեխնոլոգիապես ճիշտ է կատարված մասնիկների ջերմախոնավամշակումը,

դ. գրպանի մշակումը կատարված է մոդելին համապատասխան:

Գնահատման միջոցը

Ձննել մշակված գրպանը և համեմատել պատվերի ուրվագծի հետ.

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը պահպանում է մշակման հերթականությունը, ճիշտ է օգտագործում օժանդակ նյութերը՝ սոսնձային երիզ, միջնադիր և այլն, ջերմախոնավամշակման ժամանակ ընտրել է նմուշին համապատասխան ջերմային ռեժիմ:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ

Արդյունքը ձեռք է բերվում տեսական և գործնական պարապմունքների միջոցով:

Արհեստանոցում անհրաժեշտ է ունենալ սոսնձային նյութեր, ջերմախոնավամշակման սարքավորումներ և պարագաներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ

Տեսական – 2 ժամ

Գործնական – 8 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ՄԱՆՐ ՄԱՍՆԻԿՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ»

Մոդուլի դասիչը՝ **ԿԱՏԴ -3-08-004**

Մոդուլի նպատակը՝

Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել կարածոների զանգվածային և անհատական արտադրության մեջ օգտագործվող մանր մասնիկների մշակման տեխնոլոգիայի կիրառման կարողություն:

Մոդուլի տևողությունը՝ 36 ժամ

Տեսական ուսուցում 10 ժամ

Գործնական աշխատանք 26 ժամ

Մուտքային պահանջները՝ Այս մոդուլը ուսումնասիրելու համար սովորողը պետք է անցած լինի ԱԱՕ-3-08-001, ԿԱՏԴ-3-08-002 մոդուլները:

Ուսումնառության արդյունքները՝

Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է՝

1. հաշվարկի մանր մասնիկների նյութածախսը,
2. տեղադրի շղթան, ձևի և մշակի օձիքը,
3. ձևի և մշակի բազկակալը, ուսադիրը, կափարիչը և գոտին:

Գնահատման կարգը

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Հաշվարկել մանր մասնիկների նյութածախսը:

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝</u>

ա. ճիշտ է հաշվում մանր մասնիկների նյութի ծախսը,

բ. ռացիոնալ օգտագործում է ձևվածքի թափոնները:

Գնահատման միջոցը

Գրավոր աշխատանք և բանավոր հարցում.

Թեման՝ կատարել 1-2 մասնիկի հաշվարկ և հիմնավորել արդյունքը՝ համեմատելով արտադրանքի ուրվագծի հետ:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ձևվածքի թափոնները օգտագործում է ռացիոնալ:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ

Արդյունքը ձեռք է բերվում տեսական պարապմունքների և գործնական վարժությունների միջոցով:

Արհեստանոցում անհրաժեշտ է ունենալ գրենական պիտույքներ, ձևվածքի թափոններ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ – 10 ժամ, որից

Տեսական – 4 ժամ

Գործնական – 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Տեղադրել շղթան, ձևել և մշակել օձիքը:

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝</u>

ա. ճիտ է տեղադրում շղթաների նշված տեսակները՝

1. Կիսաշրջազգեստի շղթա,
2. Շրջազգեստի գաղտնի շղթա,
3. Գրպանի շղթա,
4. Անդրավարտիքի շղթա (տղամարդու, կանացի),
5. Բաճկոնի շղթա:

բ. ճիշտ է ձևում օձիքների նշված տիպերը՝

1. Բորտատակին կարակցվող օձիք,
2. Կանգունակ օձիք,
3. Կանգունակով օձիք (վերնաշապիկի համար),
4. Շալաձև օձիք,
5. Անգլիական օձիք,
6. Չևավոր օձիք:

գ. ճիշտ և սահմանված ժամկետում մշակում է օձիքները վերոնշյալ տեսակները:

Գնահատման միջոցը

Գործնական առաջադրանք.

Թեմա՝ տեղադրել մեկ շղթա և մշակել օձիքի մեկ տեսակ նշված ցուցակից.

Շղթաների տեսակները.

1. Կիսաշրջազգեստի շղթա,
2. Շրջազգեստի գաղտնի շղթա,
3. Գրպանի շղթա,
4. Անդրավարտիքի շղթա (տղամարդու, կանացի),
5. Բաճկոնի շղթա:

Օձիքների տիպերը.

1. Բորտատակին կարակցվող օձիք,
2. Կանգունակ օձիք,
3. Կանգունակով օձիք (վերնաշապիկի համար),
4. Շալաձև օձիք,
5. Անգլիական օձիք,
6. Ձևավոր օձիք:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե շղթան տեղադրում է՝ համաձայն նշված չռթվածքի, ճիշտ է տեղադրում սոսնձային միջնադիրը, պահպանում է կարաբաժինները:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ

Արդյունքը ձեռք է բերվում տեսական պարապմունքների և գործնական աշխատանքի միջոցով: Արհեստանոցում անհրաժեշտ է ունենալ վերը նշված մանր մասնիկները:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ – 10 ժամ, որից

Տեսական – 2 ժամ

Գործնական – 8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Բազկակալի, ուսադիրների, կափարիչների և գոտիների մշակումը

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝</u>

ա. ճիշտ և սահմանված ժամկետում մշակում է բազկակալների, ուսադիրների, կափարիչների, գոտիների նշված տիպերը.
   1. Ուղիղ բազկակալ,
   2. Ձևավոր բազկակալ,
   3. Շրջազգեստի վրայից կապվող գոտի,
   4. Կիսաշրջազգեստի կանգունակ գոտի,
   5. Կիսաշրջազգեստի շրջակտորով գոտի,
   6. Ուղիղ կարի մեջ մտնող ուսադիր,
   7. Սուր ծայրով ուսադիր,
   8. Ուղիղ կափարիչ,
   9. Ձևավոր կափարիչ:

բ. ճիշտ է մշակում գոտու կամրջակները:

Գնահատման միջոցը

Գործնական աշխատանք և բանավոր հարցեր.

Թեմա՝ սահմանված ժամանակահատվածում մշակել մեկ բազկակալ և մեկ գոտի:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է կիրառում հիմնական և օժանդակ նյութերը, ճիշտ է ընտրում կարաբաժինները, անթերի զարդակարում է: Մասնիկների մշակման տեխնոլոգիայի վերբերյալ հարցերին տալիս է մտածված պատասխաններ:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ

Արդյունքը ձեռք է բերվում տեսական պարապմունքների և գործնական աշխատանքի միջոցով:

Անհրաժեշտ է ունենալ ձևվածքի թափոններ, սոսնձային նյութեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ – 16 ժամ, որից

Տեսական – 4 ժամ

Գործնական – 12 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ԱՍՏԱՌԻ ՄՇԱԿՈՒՄ»

Մոդուլի դասիչը՝ **ԿԱՏԴ-3-08-005**

Մոդուլի նպատակը՝

Մոդուլը նախատեսված է «Դերձակ» որակավորմամբ արհեստավորի պատրաստման համար: Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել կարածոների զանգվածային և անհատական արտադրության մեջ օգտագործվող աստառների մշակման տեխնոլոգիայի կիրառման կարողություն:

Մոդուլի տևողությունը՝ 18 ժամ

Տեսական ուսուցում 3 ժամ

Գործնական աշխատանք 15 ժամ

Մուտքային պահանջները՝ Այս մոդուլը ուսումնասիրելու համար սովորողը պետք է անցած լինի ԱԱՕ-3-08-001, ԿԱՏԴ-3-08-001 և ԿԱՏԴ-3-08-002 մոդուլները:

Ուսումնառության արդյունքները՝

Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո սովորողը պետք է.

1. ընտրի գործվածքը և ձևի աստառը,
2. մշակի աստառը համաձայն մոդելի,
3. կատարի աստառի վերջնական ջերմախոնավամշակում:

Գնահատման կարգը

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Ընտրել գործվածքը և ձևել աստառը

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝</u>

ա. ճիշտ է ընտրում աստառացու գործվածքը.

բ. աստառի ձևման ընթացքում էական սխալներ թույլ չի տալիս:

Գնահատման միջոցը

Գործնական առաջադրանք.

Թեման՝ Հագուստի տրված տեսականու համար ձևել աստառ:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ձևելու ընթացքում ուսանողը էական սխալներ թույլ չի տալիս, ձևվածքը համապատասխանում է մոդելին:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ

Արդյունքը ձեռք է բերվում տեսական պարապմունքների և գործնական աշխատանքի միջոցով: Անհրաժեշտ է ունենալ տաքացնող միջնադիր, տարբեր գույների սինթետիկ գործվածքներ և սարժա:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ – 6 ժամ, որից

Տեսական – 1 ժամ

Գործնական – 5 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Մշակել աստառը՝ համաձայն մոդելի

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝</u>

ա. ճիշտ է ընտրում կարատեսակները.

բ. աստառի կարերն ուղիղ են.

գ. ուռուցիկությունների համապատասխանեցումը կատարում է համաձայն տեխնոլոգիայի:

Գնահատման միջոցը

Արտադրանքը համեմատել մոդելի հետ, բանավոր հարցման միջոցով պարզել մշակման տեխնոլոգիական հաջորդականությունը.

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե գործվածքի տեսակը և գույնը ընտրված են մոդելին համապատասխան, ուռուցիկությունների համապատասխանեցումը կատարել է տեխնոլոգիապես ճիշտ, հարցերին տալիս է գրագետ և հիմնավոր պատասխաններ:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ

Արդյունքը ձեռք է բերվում տեսական պարապմունքների և գործնական աշխատանքի միջոցով:

Անհրաժեշտ է ունենալ տաքացնող միջնադիր, տարբեր գույների սինթետիկ գործվածքներ և սարժա:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ – 6 ժամ, որից

Տեսական – 1 ժամ

Գործնական – 5 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Աստառի վերջնական ջերմախոնավամշակում

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. Ճիշտ է ընտրում ջերմախոնավամշակման սարքավորումները,

բ. ջերմախոնավամշակման արդյունքում ուռուցիկությունների համապատասխանեցումը չի խախտվում:

Գնահատման միջոցը

Գործնական առաջադրանք.

Թեման՝ Ջերմախոնավամշակել տաքացնող միջնադիրով որևէ աստառ և բացատրել սինթետիկ և սարժա գործվածքներից կարված աստառների ջերմախոնավամշակման տեխնոլոգիան:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ջերմախոնավամշակման ընթացքում աստառի ուռուցիկությունները չեն խախտվում:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ

Արդյունքը ձեռք է բերվում տեսական գիտելիքների և վարժությունների միջոցով:

Անհրաժեշտ է ունենալ ջերմախոնավամշակման սարքավորումներ և պարագաներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ – 6 ժամ, որից

Տեսական – 1 ժամ

Գործնական – 5 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ԱՆԴՐԱՎԱՐՏԻՔԻ ՄՇԱԿՈՒՄ»

Մոդուլի դասիչը՝ **ԿԱՏԴ-3-08-006**

Մոդուլի նպատակը՝

Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել անհատական պատվերի հիման վրա անդրավարտիք կարելու կամ ձևափոխելու, կարածոն նորոգելու կարողություններ՝ ներառյալ մեքենայական արտադրամասում անդրավարտիք մշակելու օպերացիաները:

Մոդուլի տևողությունը՝ 40 ժամ

Տեսական ուսուցում 8 ժամ

Գործնական աշխատանք 32 ժամ

Մուտքային պահանջները՝ Այս մոդուլը ուսումնասիրելու համար սովորողը պետք է անցած լինի ԱԱՕ-3-08-001, ԿԱՏԴ-3-08-001, ԿԱՏԴ-3-08-002, ԿԱՏԴ-3-08-003, ԿԱՏԴ-3-08-004 և ԿԱՏԴ-3-08-005 մոդուլները:

Ուսումնառության արդյունքները՝ Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է՝

1. անդրավարտիք կարելու համար ընտրի գործվածքը, կատարի էսքիզ, վերցնի չափերը, կատարի համապատասխան հաշվարկներ,
2. ձևի գործվածքն ըստ մոդելի՝ հաշվի առնելով չափահասակային տվյալները,

3. առանձնացնի և մշակի մասնիկները,
4. նախապատրաստի չափափորձի, իրականացնի չափափորձ,
5. կարի անդրավարտիքը, արտադրանքը բերի վերջնական տեսքի:

Գնահատման կարգը

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Անդրավարտիք կարելու համար ընտրել գործվածքը, կատարել էսքիզ, վերցնել չափերը, կատարել համապատասխան հաշվարկներ

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. ճիշտ է ընտրում անդրավարտիք կարելու համար նախատեսվող գործվածքը՝ համաձայնեցնելով պատվիրատուի հետ,
բ. ճիշտ է կատարում էսքիզն՝ ըստ մոդելի,
գ. ճիշտ է վերցնում պատվիրատուի չափերը և ճիշտ է կատարում համապատասխան հաշվարկները:

Գնահատման միջոցը

Գործնական առաջադրանք.

Թեմա՝ Պայմանական պատվիրատուից վերցնել մարմնի չափերը և տեղադրել արտադրանքի ուրվագծի վրա:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը կարողանում է պատվերին համապատասխան ընտրել գործվածքը և առաջադրանքը կատարում է անթերի:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ

Արդյունքը ձեռք է բերվում տեսական ուսուցման և գործնական պարապմունքների միջոցով:

Անհրաժեշտ է ունենալ սանտիմետրային ժապավեն և քանոն, անտրոպոմետր, չափային տիպոլոգիայի աղյուսակներ, գործվածքի տեսականի:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ – 6 ժամ, որից

Տեսական – 1 ժամ

Գործնական – 5 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Ձևել գործվածքն ըստ մոդելի՝ հաշվի առնելով չափահասակային տվյալները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. լեկալը ճիշտ է պատրաստում,
բ. գործվածքը ճիշտ է նախապատրաստում ձևման,
գ. լեկալը և չափսերը ճիշտ է տեղադրում գործվածքի վրա

Գնահատման միջոցը

Ձևնել գործնական պարապմունքների ընթացքում կատարած աշխատանքները.

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե լեկալը ընտրել է էսքիզին համապատասխան, գործվածքի շրջերեսին նշված են թերությունները, ճիշտ են դրված ստուգիչ նշանները:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ

Արդյունքը ձեռք է բերվում տեսական ուսուցման և գործնական պարապմունքների միջոցով:

Անհրաժեշտ է ունենալ սանտիմետրային ժապավեն և քանոն, անտրոպոմետր, չափային տիպոլոգիայի աղյուսակներ, գործվածքի տեսականի:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ – 8 ժամ, որից

Տեսական – 2 ժամ

Գործնական – 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Առանձնացնել և մշակել մասնիկները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. մասնիկներն առանձնացնում (կտրում) է խնամքով՝ կավճագծմանը համապատասխան,

բ. Ճիշտ է կատարում բոլոր մասնիկների մշակումը՝ ըստ մոդելի,
գ. Ճիշտ է ընտրում կարատեսակները:

Գնահատման միջոցը

Գործնական առաջադրանք.

Թեման՝ Նշված մասնիկներից տալ մշակելու որևէ մեկը և բացատրել մյուսների մշակման տեխնոլոգիան (գրպան, գուլֆիկ, կամրջակ, գոտի, շղթա, կոճակ):

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե մանր մասնիկները առանձնացված և մշակված են համաձայն էսքիզի, ճիշտ են ընտրված կարատեսակները:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ

Արդյունքը ձեռք է բերվում գործնական պարապմունքների միջոցով:

Անհրաժեշտ է ունենալ աքսեսուարների մեծ ընտրանի (շղթա, կոճակ, ճարմանդ, կեռիկ և այլն):

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ – 8 ժամ, որից

Տեսական – 2 ժամ

Գործնական – 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Նախապատրաստել չափափորձի և կարել անդրավարտիքը

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝</u>

ա. բոլոր ձեռքի կարերը ճիշտ է կատարում,
բ. չափափորձի ընթացքում արտադրանքը հստակ նստեցնում է պատվիրատուի մարմնի վրա,
գ. Ճիշտ է կատարում փորվածքների ուղղումները:

Գնահատման միջոցը

Գործնական առաջադրանք.

Թեման՝ Չափափորձի ժամանակ (գործնական պարապմունքների ընթացքում կարած որևէ նմուշ) շտկել նմուշի ձևման թերությունները, ուղղել փորվածքները:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը կարողանում է արտադրանքը հստակ նստեցնել պատվիրատուի վրա և հիմնականում շտկում է փորվածքները:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ

Արդյունքը ձեռք է բերվում գործնական պարապմունքների ընթացքում:

Անհրաժեշտ է ունենալ մանեկեն, մարդու ֆիգուրա, սանտիմետրային ժապավեն, անտրոպոմետր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ – 6 ժամ, որից

Տեսական – 1 ժամ

Գործնական – 5 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 5. Արտադրանքը բերել վերջնական տեսքի

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝</u>

ա. վերացնում է չափափորձի ընթացքում նկատված թերությունները,
բ. մեքենայական կարատեսակները ընտրում է ճիշտ,
գ. անդրավարտիքը մաքրում է արտադրական թափոններից,
դ. Ճիշտ է կատարում վերջնական ջերմախոնավամշակում:

Գնահատման միջոցը

Գործնական առաջադրանք և գրավոր հարցում.

Թեման՝ Շարադրել անդրավարտիքի կազմման օպերացիաների տեխնոլոգիական հաջորդականությունը:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե շարադրանքը ճիշտ է, արտադրանքը մաքրված է թափոններից և ջերմախոնավամշակված է:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ

Արդյունքը ձեռք է բերվում տեսական ուսուցման և գործնական պարապմունքների ընթացքում:

Անհրաժեշտ է ունենալ ջերմախոնավամշակման սարքավորումներ և պարագաներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ – 12 ժամ, որից

Տեսական – 2 ժամ

Գործնական – 10 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ՎԵՐՆԱՇԱՊԻԿԻ ՄՇԱԿՈՒՄ»

Մոդուլի դասիչը՝ **ԿԱՏԴ-3-08-007**

Մոդուլի նպատակը՝

Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել՝ անհատական պատվերի հիման վրա վերնաշապիկ կարելու, ձևափոխելու և նորոգելու կարողություններ՝ ներառյալ մեքենայական արտադրամասում կանացի վերնաշապիկ մշակելու օպերացիաները:

Մոդուլի տևողությունը՝ 18 ժամ

Տեսական ուսուցում 4 ժամ

Գործնական աշխատանք 14 ժամ

Մուտքային պահանջները՝ Այս մոդուլը ուսումնասիրելու համար սովորողը պետք է անցած լինի ԱԱՕ-3-08-001, ԿԱՏԴ-3-08-001, ԿԱՏԴ-3-08-002, ԿԱՏԴ-3-08-003, ԿԱՏԴ-3-08-004 մոդուլները:

Ուսումնառության արդյունքները՝

Մոդուլն ուսումնասիրելուց հետո սովորողը պետք է.

1. վերցնի պատվիրատուի չափսերը, ստուգի գործվածքի որակը, կատարի համապատասխան հաշվարկներ և վերնաշապիկի էսքիզը,
2. ձևի գործվածքն ըստ մոդելի,
3. միացնի մշակված մասնիկները,
4. արտադրանքը բերի վերջնական տեսքի:

Գնահատման կարգը

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Վերցնել պատվիրատուի չափսերը, ստուգել գործվածքի որակը, կատարել համապատասխան հաշվարկներ և վերնաշապիկի էսքիզը

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝</u>

ա. ճիշտ է կատարում պատվերի ձևակերպումը,

բ. ճիշտ է վերցնում չափերը, կատարում էսքիզը:

Գնահատման միջոցը

Գործնական առաջադրանք.

Թեման՝ Պայմանական պատվիրատուից վերցնել պատվեր, ձևակերպել և կազմել կենցաղսպասարկման պայմանագիր:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե էսքիզը համապատասխանում է պատվերին, չափերը ճիշտ են տեղադրված էսքիզի վրա:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ

Արդյունքը ձեռք է բերվում տեսական ուսուցման և գործնական աշխատանքի միջոցով:

Անհրաժեշտ է ունենալ գործվածքի տեսականի, չափային տիպոլոգիայի աղյուսակներ, սանտիմետրային ժապավեն և քանոն, գրենական պիտույքներ, մոդայի ամսագրեր, տեսաերիզ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ – 4 ժամ, որից

Տեսական – 1 ժամ

Գործնական – 3 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Ձևել գործվածքը ըստ մոդելի

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. ճիշտ է կատարում վերնաշապիկի հիմքի գծագիրը,
բ. ճիշտ է ընտրում հենքաթելի ուղղությունը,
գ. լեկալը ճիշտ է տեղադրում գործվածքի վրա,
դ. ճիշտ է կտրում մասնիկները:

Գնահատման միջոցը

Ձևել ձևվածքը և համեմատել պատվերի հետ: Ուսանողին տալ բանավոր հարցեր.

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ձևվածքը համապատասխանում է էսքիզին, ճիշտ են դրված ստուգիչ նշանները, գործվածքի շրջերեսին նշված են գործվածքի թերությունները

Մեթոդաբանություն և ռեսուրսներ

Արդյունքը ձեռք է բերվում տեսական ուսուցման և գործնական աշխատանքի միջոցով:

Անհրաժեշտ է ունենալ գործվածքի տեսականի, չափային տիպոլոգիայի աղյուսակներ, սանտիմետրային ժապավեն և քանոն, գրենական պիտույքներ, մոդայի ամսագրեր:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ – 4 ժամ, որից

Տեսական – 1 ժամ

Գործնական – 3 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Միացնել մշակված մասնիկները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. մշակված դետալները միացնում է համաձայն մոդելի,
բ. երկրորդ չափափորձի ընթացքում վերացնում է թերությունները:

Գնահատման միջոցը

Գործնական աշխատանք.

Թեման՝ Արտադրանքին միացնել նշված մասնիկներից որևէ մեկը և բացատրել մյուս մասնիկների միացման տեխնոլոգին (օձիք, բազկակալ, թև, գրպան, կոճկելատեղ, կոկետկա):

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը առաջադրանքը կատարում է ոչ էական թերություններով և պատկերացնում է մյուս մասնիկների միացման տեխնոլոգիան:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ

Արդյունքը ձեռք է բերվում տեսական ուսուցման և գործնական պարապմունքների միջոցով:

Անհրաժեշտ են ձեռքի և մեքենայի կարատեսակները կարելու պարագաներ՝ թելեր, ասեղ, մկրատ, չափիչ պարագաներ, ուղիղ և եզրակարեր տվող մեքենաներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ – 6 ժամ, որից

Տեսական – 1 ժամ

Գործնական – 5 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Արտադրանքը բերել վերջնական տեսքի

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. ճիշտ է զարդակարում եզրամասերը,
բ. վերացնում է փոթերը և ձգումները,
գ. վերնաշապիկը մաքրում է թափոններից և ենթարկում է վերջնական ջերմախոնավային մշակման:

Գնահատման միջոցը

Գրավոր աշխատանք և գործնական առաջադրանք.

Թեման՝ Շարադրել օպերացիաների տեխնոլոգիական հաջորդականությունը: Որևէ պատրաստի նմուշ ենթարկել ջերմախոնավամշակման:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե շարադրանքի մեջ էական թերություններ չկան և պատվիրատուն գոհ է դերձակի աշխատանքից:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ

Արդյունքը ձեռք է բերվում տեսական ուսուցման և գործնական պարապմունքների միջոցով:

Անհրաժեշտ է ունենալ գրականություն, մոդայի ամսագրեր, նկար-պլակատներ, տեսագրված սկավառակներ, համակարգիչ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ – 4 ժամ, որից

Տեսական – 1 ժամ

Գործնական – 3 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ԿԻՍԱՇՐՋԱԶԳԵՍՏԻ ՄՇԱԿՈՒՄ»

Մոդուլի դասիչը՝ **ԿԱՏԴ-3-08-008**

Մոդուլի նպատակը՝

Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել՝ անհատական պատվերի հիման վրա կիսաշրջազգեստ կարելու, նորոգելու, ձևափոխելու կարողություններ՝ ներառյալ մեքենայական արտադրամասում կիսաշրջազգեստ մշակելիս կիրառվող բոլոր օպերացիաները:

Մոդուլի տևողությունը՝ 22 ժամ

Տեսական ուսուցում 4 ժամ

Գործնական աշխատանք 18 ժամ

Մուտքային պահանջներ՝ Այս մոդուլը ուսումնասիրելու համար սովորողը պետք է անցած լինի ԱԱՕ-3-08-001, ԿԱՏԴ-3-08-001, ԿԱՏԴ-3-08-002, ԿԱՏԴ-3-08-003, ԿԱՏԴ-3-08-004 և ԿԱՏԴ-3-08-005 մոդուլները:

Ուսումնառության արդյունքները՝

Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո սովորողը պետք է.

1. ձևակերպի պատվերը, ստուգի գործվածքի որակը, վերցնի չափերը և կատարի համապատասխան հաշվարկներ.
2. ձևի գործվածքը և մշակի մասնիկները.
3. արտադրանքը բերի վերջնական տեսքի:

Գնահատման կարգը

Մոդուլի ընդունելի կատարողականը՝ յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Ձևակերպել պատվերը, ստուգել գործվածքի որակը, վերցնել չափերը և կատարել համապատասխան հաշվարկներ

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝</u>

ա. պատվերը ճիշտ է ձևակերպում,

բ. գործվածքի շրջերեսին նշում է գործվածքի թերությունները,

գ. էսքիզի համապատասխան ճիշտ է վերցնում չափերը և կատարում գործվածքի ծախսի հաշվարկը:

Գնահատման միջոցը

Գործնական առաջադրանք և բանավոր հարցեր.

Թեման՝ Պայմանական պատվիրատուից վերցնել մարմնի չափերը, տեղադրել արտադրանքի էսքիզի վրա:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե էսքիզը համապատասխանում է պատվերին, ճիշտ է վերցնում գոտկատեղի և կոնքի շրջագծերի երկարությունները:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ

Արդյունքը ձեռք է բերվում տեսական ուսուցման և գործնական աշխատանքի միջոցով:

Անհրաժեշտ է ունենալ կիսաշրջազգեստացու գործվածքներ, չափային տիպոլոգիայի աղյուսակներ, սանտիմետրային ժապավեն, քանոն, մոդայի ամսագրեր, գրականություն, տեսաերիզ, համակարգիչ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ – 6 ժամ, որից

Տեսական – 1 ժամ

Գործնական – 5 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Ձևել գործվածքը և մշակել մասնիկները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. Ճիշտ է ընտրում հենքաթելի ուղղությունը,
բ. Ճիշտ է տեղադրում լեկալը և կավճագծում,
գ. Ճիշտ է ընտրում կոնքի գիծը և նշում սեղմոնները,
դ. չափափորձի ժամանակ վերացնում է ձևվածքի թերությունները:

Գնահատման միջոցը

Ձննել ձևվածքը և համեմատել պատվերի հետ: Տալ առաջադրանք՝ մշակել նշված մասնիկներից որևէ մեկը՝ առաջամաս, հետևամաս, գրպան, շղթա, գոտի:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ճիշտ է ընտրել հենքաթելերի ուղղությունը և լեկալները: Ճիշտ է ընտրում գոտկատեղի և կոնքի գծերը, ճիշտ են նշված կարաբաժինները, ծալաբաժինները և ստուգիչ նշանները: Հանձնարարված մասնիկը մշակել է առանց էական թերությունների:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ

Արդյունքը ձեռք է բերվում տեսական ուսուցման և գործնական աշխատանքի միջոցով:

Անհրաժեշտ է ունենալ կիսաշրջազգեստացու գործվածքներ, չափային տիպոլոգիայի աղյուսակներ, սանտիմետրային ժապավեն, քանոն, մոդայի ամսագրեր, գրականություն, տեսաերիզ, համակարգիչ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ – 10 ժամ, որից

Տեսական – 2 ժամ

Գործնական – 8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Արտադրանքը բերել վերջնական տեսքի

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. Ճիշտ է տեղադրում շղթան և մշակում գոտին,
բ. աստառը ներկարում է անթերի, փոթեր և ծգումներ չկան,
գ. երկրորդ չափափորձի ժամանակ թերություններ չեն հայտնաբերվել,
դ. փեշամասը գաղտնակարում է անթերի,
ե. կիսաշրջազգեստը մաքրում է թափոններից և ենթարկում է վերջնական ջերմախոնավային մշակման:

Գնահատման միջոցը

Շարադրել օպերացիաների տեխնոլոգիական հաջորդականությունը, արտադրանքը բերել վերջնական տեսքի:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե շարադրանքի մեջ էական սխալներ չկան, և պատվիրատուն գոհ է դերձակի աշխատանքից:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ

Արդյունքը ձեռք է բերվում գործնական պարապմունքների միջոցով:

Անհրաժեշտ է ունենալ գրականություն, մոդայի ամսագրեր, տեսաերիզ, համակարգիչ, ջերմախոնավամշակման սարքավորումներ և պարագաներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ – 6 ժամ, որից

Տեսական – 1 ժամ

Գործնական – 5 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ԽԱԼԱԹԻ (ՇՐՋԱԶԳԵՍՏԻ) ՄՇԱԿՈՒՄ»

Մոդուլի դասիչը՝ **ԿԱՏԴ-3-08-009**

Մոդուլի նպատակը՝

Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել անհատական պատվերի հիման վրա խալաթ կամ շրջազգեստ կարելու կարողություններ՝ ներառյալ մեքենայական արտադրամասում խալաթ կամ շրջազգեստ մշակելիս կիրառվող բոլոր օպերացիաները:

Մոդուլի տևողությունը՝ 36 ժամ

Տեսական ուսուցում 7 ժամ

Գործնական աշխատանք 29 ժամ

Մուտքային պահանջները՝ Այս մոդուլը ուսումնասիրելու համար սովորողը պետք է անցած լինի ԱԱՕ-3-08-001, ԿԱՏԴ-3-08-001, ԿԱՏԴ-3-08-002, ԿԱՏԴ-3-08-003, ԿԱՏԴ-3-08-004, ԿԱՏԴ-3-08-005 և ԿԱՏԴ-3-08-007 մոդուլները:

Ուսումնառության արդյունքները՝

Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է.

1. ստուգի գործվածքի որակը, կատարի էսքիզ, վերցնի չափերը, կատարի համապատասխան հաշվարկներ,
2. ձևի գործվածքը՝ հաշվի առնելով չափահասակային տվյալները,
3. մշակի մանր մասնիկները և միացնի արտադրանքին,
4. կատարի արտադրանքի վերջնամշակում:

Գնահատման կարգը

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Ստուգել գործվածքի որակը, կատարել էսքիզ, վերցնել չափերը, կատարել համապատասխան հաշվարկներ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. ճիշտ է ձևակերպում պատվերը,

բ. ճիշտ է կատարում էսքիզը, չափերը ճիշտ է տեղադրում:

Գնահատման միջոցը

Գործնական առաջադրանք.

Թեման՝ Վերցնել պատվիրատուի մարմնի չափերը և տեղադրել էսքիզի վրա:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է կատարում հաշվարկը, և էսքիզը համապատասխանում է ձևակերպված պատվերին:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ

Արդյունքը ձեռք է բերվում տեսական ուսուցման և գործնական պարապմունքների միջոցով:

Անհրաժեշտ է ունենալ գործվածքի նմուշներ, չափային տիպոլոգիայի աղյուսակներ, սանտիմետրային ժապավեն և քանոն, մոդայի ամսագրեր, տեսաերիզ, գրականություն, գրենական պիտույքներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ – 8 ժամ, որից

Տեսական – 2 ժամ

Գործնական – 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Ձևել գործվածքը՝ հաշվի առնելով չափահասակային տվյալները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. ճիշտ է ընտրում հենքաթելի ուղղությունը,

բ. ճիշտ է նշում չրթվածքները,

գ. ձևվածքը կատարում է մոդելին համապատասխան:

Գնահատման միջոցը

Գործնական առաջադրանք.

Թեման՝ Գործվածքի վրա կատարել կավճագծում և տեղադրել վերցրած չափերը, տեղադրել ստուգիչ նշանները:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե կավճագծումը համապատասխանում է էսքիզին, ճիշտ է ընտրել հենքաթելերի ուղղությունը, ճիշտ են պահպանված կարաբաժինները և ծալաբաժինները:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ

Արդյունքը ձեռք է բերվում տեսական ուսուցման և գործնական պարապմունքների միջոցով:

Անհրաժեշտ է ունենալ գործվածքի նմուշներ, չափային տիպոլոգիայի աղյուսակներ, սանտիմետրային ժապավեն և քանոն, մոդայի ամսագրեր, տեսաերիզ, գրականություն, գրենական պիտույքներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ – 10 ժամ, որից

Տեսական – 2 ժամ

Գործնական – 8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Մանր մասնիկների մշակում և միացում արտադրանքին

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. մշակում է մանր մասնիկները՝ օձիք, գրպան, լանջափեշատակ, գոտի, բազկակալ և այլն,

բ. պահպանում է մասնիկները արտադրանքին միացնելու տեխնոլոգիական հաջորդականությունը՝ միացնում է արտադրանքին առաջին չափափորձից հետո:

Գնահատման միջոցը

Գործնական առաջադրանք և բանավոր հարցեր.

Թեման՝ Մշակել նշված մանր մասնիկներից երկուսը՝ օձիք, թև, գոտի, բազկակալ, լանջափեշատակ, գրպան, և միացնել արտադրանքին: Բանավոր հարցերը կարող են վերաբերել մյուս մասնիկների մշակման տեխնոլոգիային:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե մանր մասնիկները ճիշտ են միացված արտադրանքին, չափափորձի ժամանակ ուղղվել են փորվածքների չափերը, ճիշտ են ընտրված կարատեսակները:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ

Արդյունքը ձեռք է բերվում տեսական ուսուցման և գործնական պարապմունքների միջոցով:

Անհարժեշտ է ունենալ ուղիղ կար տվող, եզրակարող, կոճակ կարող մեքենաներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ – 12 ժամ, որից

Տեսական – 2 ժամ

Գործնական – 10 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Արտադրանքի վերջնամշակում

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. չափափորձի ժամանակ վերացնում է ձևվածքի թերությունները,

բ. միացման կարերն ուղիղ են,

գ. օձիքի և թևատեղերի միացման մասում թերություններ չկան,

դ. օղակ-կոճակները կարում է անթերի,

ե. արտադրանքը ենթարկում է ջերմախոնավամշակման:

Գնահատման միջոցը

Գործնական առաջադրանք.

Թեման՝ Արտադրանքը մաքրել թափոններից և կատարել ջերմախոնավամշակում սահմանված ժամանակահատվածում:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե պատվիրատուն գոհ է դերձակի աշխատանքից:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ

Արդյունքը ձեռք է բերվում տեսական ուսուցման և գործնական պարապմունքների միջոցով:

Անհրաժեշտ է ունենալ ջերմախոնավամշակման սաքավորումներ և պարագաներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ – 6 ժամ, որից

Տեսական – 1 ժամ

Գործնական – 5 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ՎԵՐԱՐԿՈՒԻ ՈՒ ԿՈՍՏՅՈՒՄԻ ՄՇԱԿՈՒՄ»

Մոդուլի դասիչը՝ ԿԱՏԴ-3-08-010

Մոդուլի նպատակը՝

Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել՝ անհատական պատվերի հիման վրա տղամարդու, կանացի կոստյում կամ վերարկու կարելու, ինչպես նաև ձևափոխելու, կարածոն նորոգելու կարողություններ՝ ներառյալ մեքենայական արտադրամասում վերարկու և կոստյում մշակելիս կիրառվող բոլոր օպերացիաները:

Մոդուլի տևողությունը՝ 144 ժամ

Տեսական ուսուցում 30 ժամ

Գործնական աշխատանք 114 ժամ

Մուտքային պայմանները՝ Այս մոդուլը ուսումնասիրելու համար սովորողը պետք է անցած լինի ԱԱՕ-3-08-001, ԿԱՏԴ-3-08-001, ԿԱՏԴ-3-08-002, ԿԱՏԴ-3-08-003, ԿԱՏԴ-3-08-004, ԿԱՏԴ-3-08-005, ԿԱՏԴ-3-08-006, ԿԱՏԴ-3-08-007, ԿԱՏԴ-3-08-008, ԿԱՏԴ-3-08-009 մոդուլները:

Ուսումնառության արդյունքները՝ Մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է.

1. մշակի կրծքի միջադիրը, հիմնական միջադիրը, ուսի միջադիրը,
2. միացնի միջադիրները արտադրանքին,
3. միացնի տակի բորտը լանջափեշին,
4. մշակի առանց կոկետկայի թիկունք,
5. մշակի կոկետկայով թիկունք,
6. մշակի թևը՝ ըստ մոդելի:

Գնահատման կարգը

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Մշակել կրծքի միջադիրը, հիմնական միջադիրը, ուսի միջադիրը.

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. միջադիրների համար ճիշտ է ընտրում գործվածքը,
բ. ճիշտ է մշակում միջադիրի 3 մասերը՝ հիմնական միջադիրը, կրծքի միջադիրը և ուսի միջադիրը,
գ. միջադիրները հավաքման համար ընտրում է օպտիմալ եղանակ,
դ. միջադիրների հավաքման համար ճիշտ է ընտրում մամլիչը,
ե. պահպանում է միջադիրների փռման տեխնոլոգիական հաջորդականությունը

Գնահատման միջոցը

Գրավոր առաջադրանք և բանավոր հարցեր.

Թեման՝ Թվարկել միջնադիրների համար օգտագործված նյութերը, մասնիկների միացման տեխնոլոգիական հերթականությունը և օգտագործվող սարքավորումները: Հարցերը տրվում են առանձին օպերացիաների պարզաբանման նպատակով:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ճիշտ են ընտրված միջնադիրացու գործվածքները, ճիշտ է կատարված ուսի, կրծքի և հիմնական միջնադիրների փռումը, պահպանված են մշակման նորմատիվային պահանջները:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ

Արդյունքը ձեռք է բերվում տեսական ուսուցման և գործնական պարապմունքների միջոցով:

Անհրաժեշտ է ունենալ միջնադիրացու գործվածքներ, մամլիչ, ջերմախոնավամշակման սարքավորումներ և պարագաներ, սանտիմետրային ժապավեն, կավճագծման պարագաներ, լեկալներ, օժանդակ նյութեր, բլանդի թել, ասեղ, մկրատ, գրականություն, պլակատներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ – 30 ժամ, որից

Տեսական – 8 ժամ

Գործնական – 22 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Միացնել միջադիրները արտադրանքին:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. ճիշտ է կատարում շուլալակարերը,
բ. ճիշտ է համընկեցնում կրծքի միջադիրի և լանջափեշի ուռուցիկությունները,
գ. լանջի ուղղումը կատարում է խնամքով (վզատեղ, թևատակ, փեշ),

դ. օգտագործում է սոսնձավոր երիզներ:

Գնահատման միջոցը

Ձևնել արտադրանքը, ստուգել կարատեսակները, կարաբաժինները, եզրերի մշակումը.

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը կրծքի միջնադիրի և լանջափեշի ուռուցիկությունը համընկեցրել է: Վզատեղի, թևատեղի և փեշի ուղղումները կատարել է խնամքով, օգտագործել է սոսնձային երիզներ:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ

Արդյունքը ձեռք է բերվում տեսական ուսուցման և գործնական պարապմունքների միջոցով:

Անհրաժեշտ է ունենալ միջնադիրացու գործվածքներ, մամլիչ, ջերմախոնավամշակման սարքավորումներ և պարագաներ, սանտիմետրային ժապավեն, կավճագծման պարագաներ, լեկալներ, օժանդակ նյութեր, բլանդի թել, ասեղ, մկրատ, գրականություն, պլակատներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ – 28 ժամ, որից

Տեսական – 4 ժամ

Գործնական – 24 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Միացնել տակի բորտը լանջափեշին:

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝</u>

ա. միացման ժամանակ պահպանում է կարաբաժինները,

բ. շուլալակարը կատարում է ուղիղ և խնամքով,

գ. տակի բորտի և լանջափեշի նստեցումները համապատասխանում են տեխնոլոգիական պահանջներին,

դ. տակի բորտի շրջումները, լանջափեշի եզրակարերը կատարում է անթերի:

Գնահատման միջոցը

Ձևնել արտադրանքը և տալ գրավոր աշխատանք.

Թեման՝ Նկարագրել տակի բորտը մշակելու և այն լանջափեշին միացնելու տեխնոլոգիական օպերացիաները:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը տակի բորտի շրջումները և եզրակարերը կատարել է անթերի, նստեցումները կատարել է տեխնոլոգիապես ճիշտ և հիմնականում ճիշտ է նկարագրում բորտի մշակման և միացման օպերացիաները:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ

Արդյունքը ձեռք է բերվում տեսական ուսուցման և գործնական պարապմունքների միջոցով:

Անհրաժեշտ է ունենալ ջարմախոնավամշակման սարքավորումներ և պարագաներ, սանտիմետրային ժապավեն, կավճագծման պարագաներ, գրականություն, պլակատներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ – 22 ժամ, որից

Տեսական – 4 ժամ

Գործնական – 18 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Մշակել առանց կոկետկայի թիկունք:

<u>ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝</u>

ա. թիկունքի վրա գոտկատեղի գրկվածությունը համապատասխանում է մոդելին,

բ. ամբողջովին վերացնում է թիկունքի կողմից առաջացած ծալքը:

Գնահատման միջոցը

Գործնական առաջադրանք.

Թեման՝ Մշակել մեկ ամբողջական կտորից, առանց կոկետկայի թիկունք:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե դետալի վրա գոտկատեղի գրկվածությունը համապատասխանում է մոդելին, բացակայում են ծալքերը և փոթերը:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ

Արդյունքը ձեռք է բերվում տեսական ուսուցման և գործնական պարապմունքների միջոցով:

Անհրաժեշտ է ունենալ ջարմախոնավամշակման սարքավորումներ և պարագաներ, սանտիմետրային ժապավեն, կավճագծման պարագաներ, գրականություն, պլակատներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ – 18 ժամ, որից

Տեսական – 4 ժամ

Գործնական – 14 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 5. Մշակել կոկետկայով թիկունք:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. պահպանում է կարաբաժինները,

բ. նստեցումը և կոկետկայի շրջումը ճիշտ է կատարում,

գ. ըստ մոդելի կոկետկան զարդակարում է խնամքով:

Գնահատման միջոցը

Գործնական առաջադրանք.

Թեման՝ Թիկնամասին միացնել ձևավոր եզրերով կոկետկաներ:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը պահպանել է կարաբաժինները, կոկետկան ճիշտ է շրջել և խնամքով շրջակարել է:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ

Արդյունքը ձեռք է բերվում տեսական ուսուցման և գործնական պարապմունքների միջոցով:

Անհրաժեշտ է ունենալ ջարմախոնավամշակման սարքավորումներ և պարագաներ, սանտիմետրային ժապավեն, կավճագծման պարագաներ, գրականություն, պլակատներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ – 20 ժամ, որից

Տեսական – 4 ժամ

Գործնական – 16 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 6. Մշակի թևը՝ ըստ մոդելի:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. թևի աստառացուն ճիշտ է ձևում,

բ. թևի չռթվածքների կարաբաժինները շուլալակարում է խնամքով,

գ. աստառացուի գաղտնակարերը և եզրակարերը ճիշտ է կատարում, պահպանում է կարաբաժինները:

Գնահատման միջոցը

Գործնական առաջադրանք.

Թեման՝ Թևը միացնել թևատեղին:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե չափափորձի ժամանակ շտկել է թևի փորվածքը, խնամքով կատարում է շուլալակար, պահպանում է կարաբաժինները, փոքեր չի առաջացնում:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ

Արդյունքը ձեռք է բերվում տեսական ուսուցման և գործնական պարապմունքների միջոցով:

Անհրաժեշտ է ունենալ ջարմախոնավամշակման սարքավորումներ և պարագաներ, սանտիմետրային ժապավեն, կավճագծման պարագաներ, գրականություն, պլակատներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ – 26 ժամ, որից

Տեսական – 6 ժամ

Գործնական – 20 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ԿԱՆԱՑԻ ԳԼԽԱՐԿԻ (ԿԵՊԿԱ) ՄՇԱԿՈՒՄ»

Մոդուլի դասիչը՝ ԿԱՏԴ-3-08-011

Մոդուլի նպատակը՝

Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել անհատական պատվերի հիման վրա գլխարկ կարելու կարողություններ՝ ներառյալ մեքենայական արտադրամասում գլխարկ մշակելիս կիրառվող բոլոր օպերացիաները:

Մոդուլի տևողությունը՝ 22 ժամ

Տեսական ուսուցում 4 ժամ

Գործնական աշխատանք 18 ժամ

Մուտքային պահանջները՝ Այս մոդուլը ուսումնասիրելու համար սովորողը պետք է անցած լինի ԱԱՕ-3-08-001, ԿԱՏԴ-3-08-001, ԿԱՏԴ-3-08-002, ԿԱՏԴ-3-08-004, ԿԱՏԴ-3-08-005 մոդուլները:

Ուսումնառության արդյունքները՝

Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է.

1. ընտրի գլխարկ կարելու համար նյութեր. հիմնական և աստառացու գործվածք, սոսնձային միջնադիր, հովարի (կոզիրյոկ) նյութը և ռեպսե ժապավեն,
2. վերցնի գլխի շրջագծի չափսը հանի լեկալը , ձևի և մշակի մասնիկները,
3. մասնիկները միացնի իրար, արտադրանքը բերի վերջնական տեսքի:

Գնահատման կարգը

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Ընտրել գլխարկ կարելու համար նյութեր. հիմնական և աստառացու գործվածք, սոսնձային միջնադիր, հովարի համար կոշտ նյութ և ռեպսե ժապավեն:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. պատվիրատուի պահանջին համապատասխան ընտրում է գլխարկի մոդելը,

բ. մոդելին համապատասխան ճիշտ է ընտրում մասնիկների նյութերը:

Գնահատման միջոցը

Գործնական առաջադրանք.

Թեման՝ Տրված հիմնական և աստառացու գործվածքները բաշխել երեք հատ գլխարկի վրա այնպես, որ թափոնները ստացվեն մինիմալ քանակով:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե մեկ գլխարկի համար հաշվարկը կատարում է ճիշտ, գործվածքից մնացած թափոնները համապատասխանում են տեխնիկական նորմաներին և օժանդակ նյութերը՝ սոսնձային միացում, հովիարի նյութը և ռեպսե ժապավենը, գործնականում ամբողջովին օգտագործվել են:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ

Արդյունքը ձեռք է բերվում տեսական ուսուցման և գործնական պարապմունքների միջոցով:

Անհրաժեշտ են վերը նշված նյութերը, մամլիչ, ջերմախոնավամշակման սարքեր և պարագաներ, սանտիմետրային ժապավեն, կավճագծման պարագաներ, գրականություն, մոդայի ամսագրեր, պլակատներ, տեսաերիզ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ – 6 ժամ, որից

Տեսական – 1 ժամ
Գործնական – 5 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Վերցնել պատվիրատուի գլխի շրջագծի չափսը, հանել լեկալը, կավճագծել և ձևել մասնիկները.

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. համաձայն չափսի ճիշտ է կատարում երեսամասի մասնիկների բաժանման հաշվարկը և կառուցում լեկալը,

բ. ճիշտ է ձևում երեսամասի մասնիկները, աստառացուն և միջնադիրը,

գ. կարաբաժինները համապատասխանում են նորմաներին:

Գնահատման միջոցը

Գործնական առաջադրանք.

Թեման՝ Համաձայն մոդելի և գրանցված չափերի կառուցել երեսամասի մեկ կտորի լեկալը:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ճիշտ է կատարել երեսամասի բաժանման հաշվարկը, կավճագծումը կատարում է խնամքով, լեկալը համապատասխանում է մոդելին:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ

Արդյունքը ձեռք է բերվում տեսական ուսուցման և գործնական պարապմունքների միջոցով:

Անհրաժեշտ են վերը նշված նյութերը, մամլիչ, ջերմախոնավամշակման սարքեր և պարագաներ, սանտիմետրային ժապավեն, կավճագծման պարագաներ, գրականություն, մոդայի ամսագրեր, պլակատներ, տեսաերիզ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ – 8 ժամ, որից

Տեսական – 2 ժամ
Գործնական – 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Միացնել մասնիկները, արտադրանքը բերել վերջնական տեսքի

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. ճիշտ է ընտրում միացման կարատեսակները.
բ. միացման ժամանակ պահպանում է տեխնոլոգիական հաջորդականությունը և կարաբաժինները.
գ. հովարը ճիշտ է միացնում արտադրանքին.
դ. արտադրանքը մաքրում է թափոններից և ենթարկում ջերմախոնավային մշակման
ե. մասնիկները մշակում է առանձին-առանձին համաձայն մոդելի:

Գնահատման միջոցը

Ձննել արտադրանքը և տալ ստուգող հարցեր.

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե մանր մասնիկները մշակված են խնամքով, հովհարը միացված է ստուգիչ կետերին համապատասխան, պահպանված են կարաբաժինները, արտադրանքը համապատասխանում է մոդելին: Ստուգիչ հարցերը կարող են վերաբերվել մասնիկների միացման տեխնոլոգիային:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ

Արդյունքը ձեռք է բերվում տեսական ուսուցման և գործնական պարապմունքների միջոցով:

Անհրաժեշտ են վերը նշված նյութերը, ինչպես նաև մամլիչ, ջերմախոնավամշակման սարքեր և պարագաներ, սանտիմետրային ժապավեն, կավճագծման պարագաներ, գրականություն, մոդայի ամսագրեր, պլակատներ, տեսաերիզ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ – 8 ժամ, որից

Տեսական – 1 ժամ
Գործնական – 7 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ՀԱՃԱԽՈՐԴԻ ՀԵՏ ՇՓՎԵԼՈՒ ԵՎ ԱՇԽԱՏԵԼՈՒ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»

Մոդուլի դասիչը՝ ԿԱՏԴ-3-08-012

Մոդուլի նպատակը՝

Մոդուլի նպատակն է ուսանողին տալ գիտելիքներ հաճախորդների հիմնական հոգեբանական տիպերի, շփման հիմունքների և սկզբունքների վերաբերյալ, ինչպես նաև ձևավորել հաճախորդին ընդունելու, բանակցություններ վարելու, հաղորդակցվելու /հնարավոր խնդիրներ լուծելու/ կարողություններ:

Մոդուլի տևողությունը՝ 18 ժամ
Տեսական ուսուցում 5 ժամ
Գործնական աշխատանք 13 ժամ

Մուտքային պահանջները՝ Այս մոդուլը ուսումնասիրելու համար սովորողը պետք է անցած լինի ԿԱՏԴ-3-08-001, ԿԱՏԴ-3-08-002, ԿԱՏԴ-3-08-003, ԿԱՏԴ-3-08-004, ԿԱՏԴ-3-08-005, ԿԱՏԴ-3-08-006, ԿԱՏԴ-3-08-007, ԿԱՏԴ-3-08-008, ԿԱՏԴ-3-08-009 ԿԱՏԴ-3-08-010 ԿԱՏԴ-3-08-011 մոդուլները:

Ուսումնառության արդյունքները՝ Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. **իմանա հաճախորդների հոգեբանական խառնվածքի տիպերը, ընդունի հաճախորդին և վարի բանակցություն.**
2. **հաճախորդի նկատմամբ լինի ուշադիր և սիրալիր, շարունակի հաճախորդի նախաձեռնությամբ սկսված զրույցը, հաստատությունում ստեղծի հյուրընկալության իրական մթնոլորտ.**
3. **իր իրավասության շրջանակներում լուծի հաճախորդի մոտ առաջացող հնարավոր խնդիրները, անհրաժեշտության դեպքում խնդիրը ճիշտ ներկայացնի իր վերադասին.**

Գնահատման կարգը

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Իմանա հաճախորդների հոգեբանական խառնվածքի տիպերը, ընդունի հաճախորդին և վարի բանակցություն:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. ճիշտ է նկարագրում հաճախորդի հոգեբանական հիմնական տեսակները և հաղորդակցման/շփման հոգեբանական հիմունքներն ու սկզբունքները.

բ. ճիշտ է որոշում առաջարկվող «հաճախորդի»[1] հոգեբանական տեսակը.

գ. հաճախորդը գոհ է բանակցության արդյունքից:

Գնահատման միջոցը

Գործնական առաջադրանք: Առաջադրված հարցերի շուրջ պայմանական հաճախորդի հետ (որը կարող է լինել համակուրսեցին) վարել բանակցություն:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը կարողանում է հաշվի առնել հաճախորդի անհատական հատկանիշները, հոգեբանական վիճակը, հաճախորդը գոհ է երկխոսության արդյունքից:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ

Արդյունքը ձեռք է բերվում տեսական պարապմունքների և վարժանքների միջոցով: Երկխոսությունը կայանում է կահավորված կարի արհեստանոցում:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ – 6 ժամ, որից

Տեսական – 1 ժամ

Գործնական – 5 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Հաճախորդի նկատմամբ լինել ուշադիր և սիրալիր, շարունակել հաճախորդի նախաձեռնությամբ սկսված զրույցը, հաստատությունում ստեղծել հյուրընկալության իրական մթնոլորտ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. ճիշտ է նկարագրում հաստատությունում հյուրընկալության մթնոլորտի պատկերացումը:

բ. ճիշտ է ցուցադրում այդ մթնոլորտը արտահայտող վարվելակերպը «հաճախորդների» նկատմամբ:

Գնահատման միջոցը

Հաճախորդի հետ անցկացնել երկխոսություն, զրույց հիմնական և օժանդակ նյութերի ընտրության շուրջ:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե հաճախորդը բավարարված է դերձակի հյուրընկալ վերաբերմունքից, ստանում է մասնագիտական խորհրդատվություն և պատրաստակամություն է հայտնում լինել մշտական հաճախորդ:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ

Արդյունքը ձեռք է բերվում տեսական պարապմունքների և վարժանքների միջոցով: Երկխոսությունը կայանում է կահավորված կարի արհեստանոցում:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ – 6 ժամ, որից

Տեսական – 2 ժամ

Գործնական – 4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Իր իրավասության շրջանակներում լուծի հաճախորդի մոտ առաջացող հնարավոր խնդիրները, անհրաժեշտության դեպքում խնդիրը ճիշտ ներկայացնի իր վերադասին:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. ճիշտ է նկարագրում իր իրավասությունների շրջանակը հաստատությունում սահմանված կանոններին համապատասխան.

բ. ճիշտ է ներկայացնում հաճախորդի մոտ առաջացող հնարավոր խնդիրները և դրանց լուծման եղանակներն իր իրավասության շրջանակներում.

[1] որպես այդպիսին կարող է հանդիսանալ իր դասընկերը

գ. ճիշտ է ընկալում հաճախորդի մոտ առաջացած խնդիրը և առաջարկում դրանց լուծումների համապատասխան տարբերակներ.
դ. ճիշտ ձևով է հիշեցնում հաճախորդին հաստատությունում սահմանված կանոնների և հաշիվը փակելու անհրաժեշտության մասին.
ե. ճիշտ է ձևակերպում և ներկայացնում խնդիրն իր վերադասին:

Գնահատման միջոցը

Հաճախորդի հետ անցկացնել երկխոսություն, զրույց իրենց շփման առարկայի շուրջ:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե հաճախորդը բավարարված է դերձակի հյուրընկալ վերաբերմունքից, ստանում է մասնագիտական խորհրդատվություն և պատրաստակամություն է հայտնում լինել մշտական հաճախորդ:

Մեթոդաբանություն և ռեսուրսներ

Արդյունքը ձեռք է բերվում տեսական պարապմունքների և վարժանքների միջոցով: Երկխոսությունը կայանում է կահավորված կարի արհեստանոցում:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակ – 6 ժամ, որից

Տեսական – 2 ժամ

Գործնական – 4 ժամ